

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԶ. ՏԱՐԻ, 2007, ԹԻԻ 3-4 (297-298) VOL. XXVI N°3-4

السنة السادسة والعشرون العدد الثالث - الرابع



150ԱՄԵԱԿ ՊԷՅՏՆ ՓԱՌԻԸԼԻ ԾՆՆԴԵԱՆ


100ԱՄԵԱԿ ՍԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ





# ԹԻՒՆԻՆ ՆԻՒԹԵՐՂ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مارزیک مجله ریاضية شهريّة تصددها جمعيّة الهوستمن الرياضی



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
 ԻՉ. ՏԱՐԻ, 2007, ԹԻԻ 3-4 (297-298)

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիզեն Առագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ  
 Սեդա Պէշլեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ  
 Աբօ Մոսիկեան  
 Գօգօ Մկրտիչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ  
 Տոքթ. Միսաք Արզումանեան, Խորէն  
 Քիրապեան, Պետրոս Շենմեսեան,  
 Սամուէլ Մկրտիչեան, Յակոբ  
 Կարապետեան, Սալբի Լատոյեան  
 և շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Չարեհ Չէօրէքճեան  
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան  
 Colour Seperation - Photogravure Paklayan  
 Կողքի Չեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ  
 Պուրճ Հանուտ, Ճինիչեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

### ՅՐԻՈՒՄ


Լիբանանի մէջ թերթին  
 հատաւիճառի սակն է 3000 լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան  
 սակ ճշդուած է 35000 լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մէկուսի  
 և Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 և Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա և Աւստրալիա՝ \$55):



20

### Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Յուշեր 3
- Դաստիարակչական 9
- Խոհեր 11
- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Մ.Ա.Կ. 18
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 23
- Մեր Կորուստները 37



24

### ԲԱԺԻՆՆԵՐ

- Ոգեկոչում 14
- Սկաուտական 16
- Հ.Մ.Ա.Կ. 20
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



36



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՍՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# ՄԱՐԶԱՆՔԻ ՃԱՄԲՈՎ

**Ա**պրելու, ապրեցնելու եւ ապագայ սերունդը ապահովելու փափաքը բնածին է ամէն մարդու մօտ, առաւել կամ նր-  
ւայ չափով:

Աշխարհի վրայ իւրաքանչիւր էակ սահմանուած է կեանքի որոշ շրջան մը բոլորելու: Կ'ապրին անոնք, որոնք ֆիզիքապէս կենսունակ են ու զօրաւոր: Իսկ ապրելու համար պէտք է տեւաբար պայքարիլ: Աշխարհը երբեք խաղաղութեան տրամադիր եղած չէ եւ այսօր ալ չէ: Պայքարը, զանազան ձեւի տակ, միշտ կայ ու կը մնայ:

Հետեւաբար, կեանքի պայքարին դիմադրելու եւ տոկալու համար, մարդ նախ ֆիզիքապէս զօրաւոր, կենսաբանօրէն առողջ եւ կազմախօսականօրէն ջլապինդ մարմին պէտք է ունենայ: Բան մը, որուն նախապայմանը համա-  
չափ մարզանքն է՝ կանոնաւորաբար:

Շատեր, դժբախտաբար, շատ-շատեր, մարզանքը ժամանց ու ժամավաճառութիւն կը նկատեն՝ առանց անդրադառնալու անոր բարերար ազդեցութեան՝ անհատական առողջութեան եւ ազգապահպանման անհրաժեշտութեան վրայ:

Բնութեան մէջ ուժն է որ կը գործէ, կ'արտադրէ, կը ստեղծագործէ: Տիեզերական այդ անվիճելի օրէնքը բացառութիւն չունի: Քանի ժառանգական օրէնքներու տրամադրութեան համաձայն, մարդ հարկադրուած է իր հիւլէէն մաս մը- ֆիզիքական եւ հոգեկան մասնիկներէն- փոխանցելու յաջորդող սերունդին, իր լուսագոյնը ներկայացնելու համար իր զաւակներուն, հարկ է որ ֆիզիքական կրթութեան օգուտները գնահատէ եւ օգտուի անոնց պարզեւած բարիքներէն, իր ցեղային կենսունակութիւնը ապահովելու եւ ապագայ այլ սերունդներէ հեռու մնալու համար:

Մեր օրերուն, բոլոր ազգերն ալ

զերբնական ճիգեր կը թափեն ու միլիառներ կը յատկացնեն մարզարաններու եւ զանազան ձեւի մարզանքներու համար, իրենց մատաղ սերունդին բնախօսականօրէն առողջ եւ զօրաւոր մարմին մը պարգեւելու եւ ապագայ սերունդին դիմադրողական ուժը զօրացընելու համար՝ իրենց ազգին տեւականացման ի խնդիր, որովհետեւ ժողովուրդներու գոյութեան համար նոր սերունդին ֆիզիքական համաչափ դաստիարակութիւնը կենսական եւ վճռական կարեւորութիւն ունի:

Ազգեր, որոնք կը փափաքին աշխարհի ներկայ համակարգին մէջ իրենց արժանաւոր տեղը ունենայ, ամէնէն առաջ կը ձգտին ֆիզիքապէս կազմակերպուած ուժ ունենայ: Ու կը ստեղծեն այդ ուժը, ազգի իւրաքանչիւր անդամի հոգիին մէջ արծարծելով ազգային խոր գիտակցութիւն եւ մանաւա՛նդ հպարտութիւն, հիմք ունենալով՝ ֆիզիքական մեթոտիկ կրթութիւնը իր լուսագոյն պայմաններով:

Ազգեր այսպէս կը զօրանան եւ արին կը ստանան ապրելու եւ մաքառելու համար: Մենք, հայերս, որ բազմաթիւ պատճառներ ունինք ուրիշներէն աւելի մտահոգուելու ազգային մեր գոյատեւումով, ամէնէն աւելի պէտք ունինք քաջառողջ սերունդներու, որոնց կերտումը կարելի է մարզանքի ճամբով:

Անյետաձգելի այս պահանջին իրականացման մէջ, ահա, կարելոր դեր վերապահուած է Հ.Մ.Ը.Մ.ին, որ հայ մարդուն եւ յատկապէս նորահաս սերունդներու ֆիզիքական ու բարոյական դաստիարակութեան կը նպաստէ, ի խնդիր ազգին տեւականացման: Եւ ճիշդ այս է անոր հետապնդած նպատակն ու իտէպլը հանրային-հասարակական մեր կեանքին մէջ, սկստուտութեան եւ մարզախաղերու ճամբով՝

Մարզանքի՝ ճամբով:



# ՅՈՒՇԵՐ ՄԵՐՉԱԴՈՐ ԱՐԵՒԼՔԻ ՇՐՉԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԷՆ

**Տորթ. Միսաք Արզումանեան  
ՍԱՆ ԽՈՍԷ**

**Ն**Մ-Ը-Մ-ի կազմակերպական կառույցին մէջ, Պուրճ Համուտեան ժամանակաշրջանիս յաջորդեց աւելի լայնածիր գործադաշտի մը՝ Մերձաւոր Արեւելքի (Լիբանան-Սուրիա-Յորդանան) Շրջանային Վարչութեան մասնակցութեանս մօտաւորապէս տասնամեայ հանգրուանը:

Այդ միջոցին էր, որ յաջորդաբար առիթը ունեցայ ճանչնալու Հ.Մ.Ը.Մ-ի մէջ ղեկավարութիւն ըրած ու սերունդներու ֆիզիքական եւ ազգային-գաղափարական կազմաւորման ու զարգացման համար քրտինք թափած եղբայրներու փաղանգը, որոնք կը կոչուէին տղթ. Յակոբ Պէրպէրեան, տղթ. Յարութիւն Գազանճեան, Անդրանիկ Ուրֆալեան, Վարդիվառ Յովհաննէսեան, Յակոբ Գատեան, Վահէ Դանիէլեան, Մուրատեան եղբայրներ, Արամ Անթիքաճեան, Ժողէֆ Նալպանտեան, Նշան Թիւսիւզեան, Երուանդ Տէմիրճեան, Յակոբ Աչճեան եւ ուրիշներ, որոնց բոլորին հետ ունեցեր եմ եղբայրական կապերով յիշատակելի պահեր կամ օրեր:

Չեմ ուզեր մոռնալ Հ.Մ.Ը.Մ-ական ճարտարապետներու, բժիշկներու, ուսուցիչներու, տնօրէններու եւ գործարարներու միութենական բազմաձոյլ զօրախումբը, որուն անդամներուն անունները չեմ արձանագրեր, իրենց հետ ի պաշտօնէ գործակցութեան առիթ ունեցած չըլլալուս համար:

Խոստովանիմ ի վերջոյ, որ այսօր, յուշագրութեանս խորագիրը, զիս փոխադրելով յիշեալ օրերը, տարերային կերպով յիշողութեանս մէջ պատկերեց այն անձը, որ Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամակցեցաւ 40 երկար տարիներ ու վարեց անոնց վերջին 20ին ատենապետութիւնը:



Եղբ. Շահինեանի գլխաւորած Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութիւններէն կազմ մը:

Նստած, ձախէն աջ՝ Երուանդ Տէմիրճեան, տորթ. Միսաք Արզումանեան, Յովհաննէս Շահինեան (ատենապետ), Վարդգէս Ալահայտոյեան եւ Բիւզանդ Թորիկեան:

Ոտքի, ձախէն աջ՝ տորթ. Գեղարդ (Յ. Գազանճեան), Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Վարդիվառ Յովհաննէսեան եւ Վարուժան Մուրատեան:

Յիշեցուց նաեւ, որ այդ երկարամեայ շրջանին վերջին 10 տարիներուն, փոխ-ատենապետի պաշտօնով եղայ իր կողքին, յարգանքով խառն գնահատանքի զգացումներով:

Տարերային նոյն մղումով, կ'ուզեմ եղբ. ատենապետին մասին տարիներու ընթացքին մտածածս ու զգացածս գիրին յանձնել եւ իր միութենական բազմադիւն կեանքը գնահատող վկայութեամբ ծաղկեցնել իր յիշատակը:

Այդ ընելու համար ալ, նախամեծար կը սեպեմ արտագրել այստեղ բացման այն խօսքը, զոր ուղղեցի իրեն՝ Հ.Մ.Ը.Մ-ականի իր 50ամեակին առիթով, Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան կողմէ կազմակերպուած մեծարանքի հանդիսութեան:

**ԵՂԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀԻՆԵԱՆԻ  
ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ԲԱՅՄԱՆ ԽՕՍՔՍ**

Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ը, իր Շրջանային եւ մասնաճիւղերու վարչութիւններով, իր միութենականներով ու բարեկամներով հոս է այսօր, հրապարակային տօնախմբութեամբ մը մեծարելու մէկը իր անդամներէն, որ տասնամեակներ ամբողջ աննկուն կամքով, անձնդիր նուիրումով ծառայելէ ետք, կը ներկայանայ իր կազմակերպութեան եւ զայն պահող մեր ժողովուրդին, շուրջ կէս դարու միութենական նախանձեղի վաստակով:

Կէս դար՝ խանդաբորբ կենսունակութիւն,  
Կէս դար՝ յարատեւութիւն ու գործին հանդէպ հաւատք,  
Եւ այս բոլորը՝ եղբայր Յովհաննէս Շահինեան:  
Տակաւին հազիւ երիտասարդ, կ'անցնի Հ.Մ.Ը.Մ.ի Պէյ-րուսթի շարքերը, իրեն հետ բերելով ժիպէյլի որբանոցի պատասխարեալներէն մարզասէր ու զտարիւն սաներու հոյլ մը, որոնց հետ նաեւ սկիզբ կ'առնէ իր մարզական փայլուն կեանքը:

Եւ որովհետեւ, այդ օրերու բոլոր որբերուն պէս, ինքն ալ կ'ապրէր անորակելի խռովքը ծնողակորոյս սերունդի անցեալ ու ներկայ տուայտանքներուն, ու քանի Հ.Մ.Ը.Մ.ի մէջ գտած էր իր ներաշխարհին համապատասխան ցեղապաշտ եւ ուժապաշտ գաղափարաբանութիւն, վարդահեղեղ գալիքի մը հաւատքին նուիրուած առողջ ու առողջարար շարժում:

Չի բաւականանար մարզիկի տարազներով ու մրցախաղերով, եւ շուտով կը նետուի վարչական «ասպարէզ», ուր ճա-



**Եղբ. Շահինեան (նստած, ձախից)**  
խումբ մը հաւատաւոր եղբայրներու հետ:

կատագրակից ու սրտակից այլ հայորդիներու հետ կը լծուի Պէյրուսթի նորաստեղծ մասնաճիւղը կառուցելու, եւ անհայրենիք ու թերեւս անտէր երիտասարդներու համար ոգեղէն հայրենիք՝ Հ.Մ.Ը.Մ.ը ամրացնելու նուիրական գործին:

Կ'աշխատի խանդավառութեամբ, իր պատկանելիութեամբ հպարտ եւ կեանքի հոլովոյթին հետ մեր երախտաշատ հիմնադիրներուն տեսիլքը աչքերուն, միութեան տարածման ու բարձրացման հետ համաբայ ընթացքով, կը բարձրանայ նաեւ ինք, կը դառնայ Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամ, ու ապա այդ մարմնին բազմամեայ ատենապետը:

Գիտակից յամառութեամբ, երկար շունչով կը վարէ իր պաշտօնը եւ օր մըն ալ իր անունը արդարօրէն ու արժանաւորապէս կը դառնայ իր ծառայած միութեան անուան հոմանիչ:

Արդարեւ, չկայ Հ.Մ.Ը.Մ.ական մը, Հ.Մ.Ը.Մ.ի բարեկամ մը, Լիբանանի մարզական կեանքին հետեւող հայ թէ օտար ծանօթ մարդ մը, որ չճանչնայ Շահինեանը կամ լրած չըլլայ իր մասին:

Այսօր, վազքի ախոյեանութիւններով սկսած Հ.Մ.Ը.Մ.ականի իր երկար կեանքը կ'աւարտէ նոր մրցանիչով մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ գործօն ծառայութեան 50 անընդմէջ տարիներու ախոյեանութեամբ մը ու գործով, վաստակով, յիշատակներով, մեզի կը ներկայանայ իբրեւ Մերձաւոր Արեւելքի

**ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱՍՓՈՓ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ**

- Եղբ. Յովհաննէս Շահինեան ծնած է Սեբաստիա, 1903-1904ին:
- 1915ին, ծնողքին հետ կը դառնայ գաղթական եւ արտրի ճամբուն վրայ կը կորսնցնէ ծնողքը:
- Պատանեկութեան, ամբողջ կեանքը կ'անցընէ որբանոցներու շարանի մը մէջ: Կը հասնի Ժիպէյլի Ամերիկեան Նպաստամատոյցի որբանոցը:
- 1924ին կ'անդամագրուի Հ.Մ.Ը.Մ.ին:
- Եղած է Պէյրուսթի Ամերիկեան Համալսարանի մէջ. մաս կազմած է աթլետիկայի եւ ֆութպոլի խումբերու:
- Մաս կազմած է Պէյրուսթի մասնաճիւղի վարչութեան:
- 1935-1975 (40 տարի) անդամակցած է Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան: Վերջին 20 տարին ստանձնած է ատենապետի պարտականութիւն:
- Երեք երկամեայ շրջան մաս կազմած է Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնին:
- Շրջան մը մաս կազմած է Լիբանանի կրթական նախարարութեան մարզական խորհուրդին:
- Լիբանանի պետութեան կողմէ պարգևատրուած է «Մայրիներու Ասպետ»ի կարգի շքանշանով, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ՝ «Արժանեաց» ոսկի շքանշանով:



Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան մեծ մասին՝ շնչող ու մարմնացեալ մատենաւ, որուն էջերը նուիրուած են ամբողջութեամբ ու կրքոտ սիրով՝ հայ երիտասարդութեան Ֆիզիքական ու բարոյական առողջ դաստիարակութեան, ազգապահպանման նուիրական առաքելութեան:

Այս առթիւ, յանուն Լիբանանի կազմին, որուն համար ներշնչումի աղբիւր է արդէն մեր երէց եղբոր կեանքը, յանուն Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ու փոքր բազմահարիւր անդամներուն, որոնք գնահատանքի եւ մեծարանքի իրենց խօսքը արտայայտելու պարտականութիւնը յանձնած են ինծի, թոյլ տուէք փոխ առնել Հ.Մ.Ը.Մ-ին ձօնուած, Հ.Մ.Ը.Մ-ական բանաստեղծին խօսքերը եւ ըսել եղբ. Շահինեանին.-

«Այդ հուրն անշէջ, բոցն հինաւուրց  
Փոխանցեցիր սերունդներուն  
Եւ դեռ տուիր քու սրտիդ հետ  
Կտակը մեր նախնիներուն»:

Քիչ ետք, այդ սերունդներուն անունով պիտի զարգարուի Հ.Մ.Ը.Մ-ին համար այնքան բաբախած կուրծքդ, Արժանեաց բարձրագոյն կարգի շքանշանով, որմէ վերջ միութեան ներկայացուցիչին կողմէ ճակտիդ դրոշմուէլիք համբոյրին մէջ պիտի գտնես անպայման հազարաւոր սրտերու եղբայրական սիրոյն եւ երախտագիտական զգացումներուն ջերմագին արտայայտութիւնը, անկեղծ շնորհաւորութիւնները:

\*\*\*

1979. Հ.Մ.Ը.Մ-ի Բ. Պատգամատրական Ժողովին, եղբ. Շահինեան նստած՝ ձախէն երկրորդը:



Պատե՛հ կը նկատեմ այստեղ արձանագրել, որ իր տեսակին մէջ իրապէս փառատոնային այդ շքահանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 13 Նոյեմբեր 1977ին, Պուրճ Համուտի «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ, բարձր հովանաւորութեամբ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Խորէն Ա. Վեհափառին:

Բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ-ականին նուիրուած այս տողերը կը ձօնեմ իր խնկելի յիշատակին, իրեն հետ երկարատեւ պաշտօնակցութեանս ընթացքին կուտակուած յարգամեծար զգացումներուս իբրեւ լաւագոյն թարգմանութիւնը:

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)

# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

**Armavia**  
Արմավիա

Photos: © Yann Arhous-Bertrand / Ag. Terre vue du Ciel. Licence 075 960031. StudioVCCEN 2007-2005

Direct Flights  
**PARIS**  
**YEREVAN**  
**PARIS**

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
saber@arminco.com

# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԵՐԸ՝ ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՇԻՐԻՄԻՆ ՄԱՍԻՆ

Խորէն Քիրապեան  
ՍՈՖԻԱ

**Հ**աճողքով ստացայ եղբ. Սամուէլ Մկրտիչեանի «Հ.Մ.Ը.Մ.ական մարդու ապրումներ» գիրքը: Գալիֆորնիոյ «Ասպարէզ» օրաթերթէն արդէն ծանօթ էի եղբ. Մկրտիչեանի շարք մը յօդուածներուն՝ «Վագէ՛, Հ.Մ.Ը.Մ., վագէ՛», «Հարկ ե Հ.Մ.Ը.Մ.ը գօրաշարժի ենթարկել», «Հայ մարդիկ, սիրտ տուէք, սեր տուէք Հ.Մ.Ը.Մ.ին»: Յօդուածներ, որոնք օրին բարձր գնահատած էի եւ երբեք չէի վարանած գանոնք Սոֆիայի մասնաճիւղի տարեկան ընդհանուր ժողովներուն ներկայացնելու, որպէսզի կարգացուին: Իրապէս ալ, կարգացուելէ ետք, անոնք արժանացած էին ներկաներու բուռն ծափահարութիւններուն:

Հիմա, երբ ձեռքս բռնած եմ ներկայանալի այս գիրքը, բովանդակալից իր 70է աւելի յօդուածներով, նուիրուած՝ Հ.Մ.Ը.Մ.ական դէմքերու, յուշերու, կրնաք երեւակայել գոհունակութիւնս: Հոս անգամ մը եւս կ'ուզեմ վարձքը կատար



1935. Հ.Մ.Ը.Մ.ի Պուկարիոյ սկաուտներու այցելութիւն՝ Վիտոշ լեռ: Քրիստափորի նահատակութեան վայրը քարձրացած է մեծ տանձենի մը (ձախին):

լսել եղբ. տղթ. Միսաք Արզումանեանին, որ յառաջաբան մը գրած է գիրքին եւ «Մարգիկ»ի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեանին, որ կատարած է գիրքին խմբագրութիւնը եւ իր կարգին տուած է վկայութիւն մը:

Այս տղերով կ'ուզեմ ընթերցողներուն ուշադրութիւնը կեդրոնացնել գիրքին 216րդ էջին «Այցելութիւն Քրիստափոր Միքայէլեանին» յօդուածին վրայ: Քանի մը անգամ կարդացի զայն եւ իմ կարգիս մասնակից եղայ եղբ. Սամուէլին եւ իր ընկերակիցներուն տառապանքին: Անոնք Քրիստափորի շիրիմը ժամերով փնտռելէ ետք, «Ի՞նչպէս տուն դառնամ առանց հայ յեղափոխութեան մեծ քուրմին այցելութիւն տալու» մտահոգութեամբ՝ լուրջ վտանգի մէջ են եղեր օդանաւը փախցնելու: Այստեղ պարտք կը զգամ վերջիչելու Քրիստափոր Միքայէլեանի շիրիմին կապուած դէպք մը, որ տեղի ունեցած է 72 տարի առաջ: Դէպքը կրնայ նման տագնապալի



Քրիստափորի շիրիմին պահապան քոյրերը՝ Հրաչունի եւ Քնար Յակոբեաններ:



գեոլոգիները կանխել ուրիշներու:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Փլովտիլի մասնաճիւղի սկառու մասնակցեցայ Պուլկարիոյ շրջանի ընդհանուր բանակումին, նուիրուած՝ Քրիստափոր Միքայէլեանի եւ անոր օգնական Վուստպուրհ Բէնտրեանի նահատակութեան 30ամեակին: Բանակումը տեղի ունեցաւ 1935ին, Պուլկարիոյ Վիտոշ լեռան լանջերուն, մայրաքաղաք Սոֆիայէն 18 քլմ. հեռու, Վլատայա կոչուած գիւղին եզերքը: Իբր բանակավայր շատ յարմար ըլլալով, շրջանի ամենամեծ բանակումը հո'ն տեղի ունեցաւ 1935ին, 228 մասնակիցներով: Բանակումին ընդհանուր ղեկավարն էր Փլովտիլէն աւագ խմբապետ եղբ. Պօղոս Գանթարեան (պուլկար բանակի պահեստի գնդապետ): Բանակումը այցելեցին պուլկար սկառուներու պետ՝ գնդապետ Թրայանոֆ եւ զօրավար Գարեգին Նժդեհ:


Անշուշտ, իբրեւ յարգանքի արտայայտութիւն, բանակումին մասնակից կազմը այցելեց գեղախտ պատահարին վայրը, որ կը գտնուէր Սոֆիայէն 11 քլմ. եւ բանակավայրէն 6 քլմ. հեռու:

Ներկաներուն բացատրուեցաւ աղէտին թուականը՝ 5/18 Մարտ 1905, ճիշդ վայրը գտնուող տանձենիին քովը, որ կ'երեւի այս գրութեամբ ներկայացուած նկարին մէջ (տեսնել էջ 6ի նկարը - «Մ.»): Ըսուեցաւ նաեւ, որ օրին Օսմանեան կառավարութիւնը եղբերական արկածին համար խիստ բողոք մը յղած է Պուլկարիոյ կառավարութեան, որ թոյլատրած է նման բան:

Հրահանգուած ըլլալով նահատակներու յուղարկաւորութիւնը պաշտօնական չլլայ, մակեդոնական «Վէ.Մէ.Ռէ.Օ.»ն («Ներքին Մակեդոնական Յեղափոխական Կազմակերպութիւն»ը), այդ տարիներուն պետութեան մէջ պետութիւն ըլլալով, ստանձնած է պատրաստութիւնները եւ կազմակերպած է մեծաշուք յուղարկաւորութիւն մը Մարտ 10ին: Նահատակ երկու հերոսներուն դագաղները ուսամբարձ փոխադրուած են Սոֆիայի կեդրոնական գերեզմանոցը եւ տեղադրուած են 52ԲԴ ՀՈՂԱՇԵՐՏԻ 10ԲԴ ԿԱՐԳԻ ԹԻԻ 10 ԵՒ 11 ԳԵ-



1992. Մալխ 28ի առիթով այցելութիւն՝ Քրիստափորի շիրիմին:



ԲԵԶՄԱՆՆԵՐՈՒՆ Մէջ: Այս թուանշանները ունեցողը կրնայ առանց առաջնորդի միջամտութեան գտնել հերոսներուն գերեզմանները: Աւելի ուշ, գերեզմանները օժտուած են յուշարձանով եւ զինանշաններով, գործ՝ տաղանդաւոր արձանագործ Գրիգոր Ահարոնեանի:

Ամէն անգամ որ առիթ մը ներկայացած է յարգանքի թէ ծաղիկ մը զետեղելու, տարուան բոլոր եղանակներուն եւ օրուան տարբեր ժամերուն, նոյնիսկ բռնատիրական ամենավտանգաւոր տարիներուն, այդ հերոսներու գերեզմանին վրայ միշտ գտնուած են թարմ ծաղիկներ...: Լսած ենք, աշխարհի չորս ծագերէն Պուլկարիա այցելողները, մասնաւորաբար Պէյրութէն ժամանողները, օգակայանէն տակաւին պանդոկ չհասած՝ այցելած են այս ուխտատեղին:

Տեղին է յիշել այստեղ սոֆիաբնակ հանգուցեալ երկու քոյրերը՝ Հրաչուհի եւ Քնար Յակոբեանները, որոնք բարի



կամեցողութիւնը ունեցած են տասնեակ տարիներ հոգալու ուխտատեղիին ներկայանալի վիճակը, նոյնիսկ ենթարկուելով հաւանական վտանգի:

Հ.Մ.Ը.Մ-ի Սոֆիայի մասնաճիւղին վերակազմութեան առիթով, 1992ի Մայիսի հանդիսութիւնը, խուռներամ բազմութեամբ, բանախօս էտիկ Յովհաննիսեանի ներկայութեամբ, պիտի մնայ անմոռանալի: Օրին, մեր ուրախութիւնը կարճ տեւեց, որովհետեւ քանի մը օր ետք լուր ստացանք, որ Քրիստափորի կիսանդրին գողցուած է: Նախ ենթադրեցինք, որ թուրքերու գործն է այդ, բայց որովհետեւ միեւնոյն ժամանակ գողցուած էին նաեւ պուրկարական մետաղեայ արձաններ, եկանք այն եզրակացութեան, թէ Սոֆիայի գնչուներուն գործը ըլլալու է այդ:

Շատ չանցած գողցուեցաւ նաեւ Վուամչապուհ Քէնտրի-եանի դիմաքանդակը:

Կուսակցական պատասխանատու ղեկավարներ օրին խոտացան քարակոփ կիսանդրի մը գետեղումը, որպէսզի չգողցուի դարձեալ: Խոստումը սակայն մնաց խոստում...

Օրին, եղբրական 1905էն ետք, պուրկարահայերու նիւթական վիճակը բոլորովին վատ եղած է՝ անգործ, առանց բնակարանի եւ հպատակութեան: Անոնք չեն կարողացած նահատակութեան վայրէջն հողամաս մը գնել եւ համեստ մատուռ մը կառուցելով վայրը ուխտատեղիի մը վերածել: Տարիներ ետք, երբ հայութեան վիճակը քիչ մը բարելաւուած է եւ ազ-



1935. Վիտոշի բանակումին մասնակիցներու յիշատակի Գկար. կեդրոնը՝ Գարեգին Նժդեհ (փողկապով):

գայիները ուզած են հողը գնել, հողաչերտին տէրը մերժած է վաճառել զայն ըսելով, թէ երկու զաւակներուն բաժնած է զայն:

Ներկայիս, ո՛չ միայն Վիտոշի աղէտավայրը, այլեւ ամբողջ դաշտը կամ շրջանը անճանաչելի դարձած են բաւական թիւով նորակառոյց ամարանոցներու շինութեան պատճառով:

**Maison Mere**  
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt  
Tel: (202) 3913296 - 3918542  
Fax: (202) 3903899

**Ramses Hilton**  
Tel: (202) 5758000 - 5744400  
Direct: (202) 5751790

**Zamalek**  
11 Hassan Sabry st., Degla center  
Tel: (202) 3322121 - 3322130  
Fax: (202) 3322130

**VARTAN  
KAZANDJIAN**

**KAZANDJIAN**

E-mail: [vartan@intouch.com](mailto:vartan@intouch.com)

**Joillier-Orfevre Fonde en 1920**

# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՆ

- Ժ. -

«10. Ան կը հաւատայ Հայաստանին եւ Հայ Դատին ու միշտ պատրաստ է զինուորագրուելու եւ ծառայելու Հայաստանին եւ հայ ժողովուրդին»:

### Պետրոս Շեմսեւեան\* ՊԷՅՐՈՒԹ

«Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտը կտոր մը հայրենի հող էր կարծես մեր ոտքերուն տակ»:  
Մ. ԻՇԽԱՆ

**Թ**երեւս գտնուին բարեմիտներ, միամիտներ, որոնք ըսեն, թէ մարզականը ի՞նչ կապ կրնայ ունենալ քաղաքականութեան հետ, հայրենիքի եւ հայրենասիրութեան հետ: Ոմանք մինչեւ իսկ, աւելի առաջ երթալով ըսեն, թէ ան բնաւ կապ պէտք չէ ունենայ քաղաքականութեան հետ: Անոնք կը հաւատան որ մարզական բանը դուրս պէտք չէ դայ մարզական իր նեղ պարունակէն: «Մարզականը մարզականի համար» կամ «առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ»:  
Այսքան եւ վերջացաւ: Սակայն, երբ արագ ակնարկ մը նետենք ժողովուրդներու պատմութեան վրայ, արեւու պէս յստակ ու բացայայտ կը դառնայ մարզականին ներդրումը եւ ազդեցութիւնը անոնց վրայ:



Յունիս 1987. Արցախեան ազատագրական պայքարին զոհուած Հ.Մ.Ը.Մ.ական Վիգէն Զաքարեան (նստած, աջին առաջինը) հեծելարշաւի Լիբանանի կիսուներներու ախոյեանութեան վերջին հանգրտանին:

Արդարեւ, հին յունական ողիմպիականներէն սկսեալ եւ մինչեւ մեր օրերը ականատես կ'ըլլանք մարզական միջազգային մրցումներու քաղաքական երանգաւորման: Աթէնք եւ Սպարտա յունական երկու քաղաքներ էին, որոնք յարատեւ

մրցակցութեան մէջ էին իրարու հետ, ըլլայ զինուորական, քաղաքական թէ մարզական բնագաւառներու մէջ:

Նախաքրիստոնէական շրջանին տեղի ունեցող մեր Նաւասարդեան խաղերը շատ չէին տարբերք յունահռոմէական մարզական մրցակցութենէն: Հոն իսկ իշխանական, նախարարական եւ աւատապետական քաղաքական գունաւորում գզալի էր, մարզական նուաճումներէն վեր եւ անդին:

Մարզականի քաղաքականացումը աւելի եւս կը շեշտուի եւ կը բացայայտուի որքան մենք մօտենանք մեր ժամանակներուն: Օրինակները բազմաթիւ են: Քաղաքական դրդապատճառներով ողիմպիականներու պոչքոթի ենթարկում: Կեդրոնական Ամերիկայի երկու երկիրներ մինչեւ իսկ Ֆուլթոնի մրցումի մը պատճառով պատերազմ մղեցին իրարու դէմ: Միացեալ Նահանգներու պարագային, առ ի պաշտպանութիւն սեւամորթներու մարդկային իրաւունքներուն, ոսկի մետալներ մերժեցին, պատուոյ բեմահարթակին վրայ իրենց գլուխը կախ՝ ձեռքերը բռնուցք ըրած բողոք ըրին:

Այս բոլորը ցոյց կու տան, թէ ի՞նչպէս քաղաքականը առնչուած է մարզականին հետ:

Այս երկար ներածականով ուզեցինք աւելիով հիմնաւորել եւ առնչել Հ.Մ.Ը.Մ.էն ներս գոյութիւնը ունեցող կապը մարզականին եւ քաղաքականութեան հետ, Հայաստանին եւ Հայ Դատի ճամբով:

Բանաստեղծը շատ պատկերաւոր բացատրութեամբ մը ըսած է թէ Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտը կը նկատէր կտոր մը հայրենիք իր ոտքերուն տակ: Ան քաղաքական յստակ երանգաւորում մը կը տեսնէր Հ.Մ.Ը.Մ.ի մարզական ելոյթներուն մէջ:

Երբ օտարներուն համար ճիշդ է մարզականի քաղաքակա-



նացումը, ապա ուրեմն կրկնակի ճիշդ եւ ընդունելի պէտք է ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի համար, մանաւանդ երբ նկատի կ'ունենանք սփիւռքահայութեան աննախանձելի պայմանները:

Հ.Մ.Ը.Մ.ը նման գործընթաց մը ընդունած է իր հիմնադրութեան առաջին իսկ օրէն: Մինաս Չերազ, Տիգրան Խոյեան Պոլիսէն ճամբայ կ'ելլեն դէպի հայրենիք՝ հոն եւս կազմակերպելու երիտասարդութիւնը, մանաւանդ գաղթականական հսկայ զանգուածը: Հազիւ հոն հասած, անոնք վայրկեան մը իսկ չեն վարանիր իրենց ենթակայ սկառտական եւ մարզական խումբերը վերածելու Արեքսանդրապոլը եւ Բաշ Ապարանը պաշտպանող մարտունակ ֆետայիներու:

Մինաս Չերազի եւ Տիգրան Խոյեանի օրինակը կարելի է տեսնել Հ.Մ.Ը.Մ.ի ամբողջ կեանքին ընթացքին: Նոյն բարակ կարմիր գիծն է, որ կը տեսնուի իր հիմնադրութենէն մինչեւ մեր օրերը, ամէն անգամ երբ հայութիւնը կը հանդիպի իր գոյութեան սպառնացող վտանգներու:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին, լիբանանահայ թաղերը պաշտպանող երիտասարդներուն աւելի քան իննսուն առ հարիւրը Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկ, սկառտ կամ վարչական պատասխանատուներ էին, որոնց մէկ մասը նոյնիսկ նահատակուեցաւ մարտի առաջին դիրքերուն վրայ:

Չերազեան այս ոգիին բարակ կարմիր գիծը կը դրսեւորէր նաեւ Արցախեան գոյամարտին ընթացքին: Հոն կը զոհուէր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ-

Վարդան Բախշեանը: Իրեն կը հետեւէին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին մէջ թրծուած Վիգէն Զաքարեանը, Մհեր Զուլհաճեանը եւ ուրիշներ:

Վերոյիշեալ արարքները եւ օրինակները կու գան ամրագրելու մէկ հիմնական ճշմարտութիւն, թէ Հ.Մ.Ը.Մ.ի համար Հայաստանն ու Հայ Դատը անքակտելիօրէն միացած են իրարու եւ մաս կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.ական իւրաքանչիւր մարզիկի ներաշխարհին եւ էութեան: Այս իսկ պատճառով, մինչ խաղաղ օրերուն Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը կը ջանայ մրցակցութեամբ յաղթանակներ ապահովել, պաշտպանելով հայութիւնն ու Հայաստանը, պատերազմի օրերուն ան կը կերպարանափոխուի եւ կը վերածուի հայրենիքի պաշտպանութեան լծուած առասպելական ջան ֆետայիներու:

Չկան, չեն կրնար ըլլալ առանց Հայաստանի եւ Հայ Դատի ծառայութեան նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներ:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի ալֆան եւ օմեկան վերոյիշեալ երկու բառերն են՝ ՀԱՅԱՍՏԱՆ եւ ՀԱՅ ԴԱՏ:

\* Անտիպ: Խմբագրութեան յանձնուած՝ նախքան իր առողջական վիճակին վատթարացումը եւ անողոք մահը:

**FREDDY KARAGEUZIAN**

**"ONNIG OF CAIRO"**

Egyptian Museum

Tahrir Square - Cairo

Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: freddy@gega.net





Հ.Մ.Ը.Մ.Ի  
ՀԱՆՐԱՊԵ  
ՏԱՍՆԱԾԻՒՂԻՆ  
ՊԱՏՄԱԿԱՆ  
ՏՈՂԱՆՑՔԸ

Մամուլի Մկրտիչեան  
Լուս Անճեղրս

(ՆՈՒԷՐ՝ ԼԵՒՈՆ ԳՈՒՇԱՔՃԵԱՆԻՆ)

**Ե**րբեմն մարդ իրականութիւնը տեսած ըլլալով հանդերձ կը տարակուսի թէ տեսածը իրապէ՞ս իրականութիւն է: Քանի,

Երբեմն ես ինծի հարց կու տամ, թէ 1940էն 1960 թուականը երկարող ժամանակամիջոցին Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկ պի աշխատանքին բերքը՝ հազար-հազար սերունդ հրաշքի՞ ծնունդ էր, երազային տեսիլք էր թէ շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.Ի առաքեալներու յղացումին՝ կազմակերպուած ստեղծագործութիւն էր:

Այո՛, մարդ արարածի ստեղծագործութիւն էր, որ եկաւ իբրեւ հրաշք, իբրեւ Ապրիլ 24ի հրեղէն ոգի, որ հազար-հազար սերունդներ դարբնեց, մրցկեց ազգային ոգիով ու իբրեւ երդուեալներ յանձնեց Հայ կեանքին:

Հազար փառք ու պատիւ Հ.Մ.Ը.Մ.Ի առաքեալներուն՝ Նշան Թիւսիւզեանին, Լուսեր Մասպանաճեանին, Ատուր Գապաքեանին, Հրաչ Փափազեանին եւ բոլոր անոնց, որոնք ոգին էին այդ յղացումին:

Այսու ես պիտի փորձեմ տալ այդ մարդկային ստեղծագործութեան միայն մէկ երեւոյթը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկ պատմական տողանցքը: Ուստի,

Հայ մարդ, դուք տեսա՞՞ծ էք, դուք վայելած էք 1940էն 1960ական թուականներու միջեւ Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկ պի մասնաճիւղին կազմակերպած միջ-մասնաճիւղային խաղերուն փառքն ու պատիւը նկատուող տողանցքը:

Հայ մարդ, երբեւէ դուք նկատա՞՞ծ էք, դուք կշռա՞՞ծ էք այդ տողանցքին պահանջած հսկայական աշխատանքը, ծով նուիրումն ու զօրաւոր կամքը, զորս սիրով յանձն կ'առնէր Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկ պի մասնաճիւղը եւ բացառիկ յաջողութեամբ մը կը պսակէր ան:

Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկ պի մասնաճիւղը մասնազէտ էր տողանցք կազմակերպելու աշխատանքին մէջ: Ան որեւէ զոհողութեան առջեւ կանգ չէր առներ՝ կը տքնէր, քրտինք կը թափէր, բայց լաւագոյն հմայիչ տողանցքը կը կազմակերպէր ու կը հրամայէր՝ նէր հայ ժողովուրդին, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.Ի տողանցքին գլխաւոր նպատակը հայ ժողովուրդի հոգին ուրախութեամբ, հպարտութեամբ լիցքաւորուելուն մէջ կը կայանար եւ Հ.Մ.Ը.Մ.ը լաւագոյնս գլուխ կը հանէր այդ աշխատանքը:

Հայ մարդ, տողանցքին օրը երբեւէ դուք նկատա՞՞ծ էք դաշտին վրայ տիրող կարգ-կանոնը, լրջութիւնը, աշխատանքին սքանչելի գնացքը, որ ժամացոյցի մը ճշգրտութեամբ կ'ընթանար՝ առանց ձայնի, առանց որեւէ միջամտութեան ու առանց ձեւակերպութիւններու: Կարծես դաշտին վրայ տողանցող աւելի քան երեք հազար հոգին մէկ ամբողջութիւն, մէկ մեքենայ, մէկ մարդ ըլլար, որ գիտէր ի՞նչ պիտի ընէր, ո՛ր պիտի կենար եւ ո՛ր պիտի վերջանար իր պարտականութիւնը:



Այդ օր դաշտը՝ ֆուլթպոլի դաշտին ամբողջ տարածքը, առանց բացառութեան, կը տրամադրուէր միայն ու միայն տողանցող սկաուտական եւ մարզական խումբերուն: Դաշտին վրայ ո՛չ խօսնակ, ո՛չ բեմ ու ամպիոն եւ ո՛չ ալ բաժակներու տուչութիւն կ'ըլլար: Այդ բոլորը ունէին իրենց յատուկ տեղն ու ժամանակը:

Այդ օր Հայկալի քաղաքապետարանին նորակառույց դաշտը հպարտօրէն կը հիւրընկալէր աւելի քան քսանհինգ հազար մարդ ու կը խոկար թէ ի՞նչ է նպատակը կեանքին, եթէ մարդ պիտի չծառայէր մարդկութեան: Մինչ հրաւիրեալներու ամպիոնը խորհրդաւոր ծանուցութիւն մը, լրջութիւն մը կը պահէր: Հոն, պատահական մարդիկ գործ չունէին:

Մինչ տողանցքը չսկսած, մարզական կոկիկ տարագ մը հագուած, անուանի մարդիկ մը մարզական խողերուն խորհրդանշանը նկատուող վառ ջահը գլուխէն վեր բռնած եւ վագելով դաշտ մուտք կը գործէր եւ դաշտին շրջանը բոլորելէ ետք՝ ջահը կը տեղաւորէր իրեն յատուկ տեղը, որ տեսանելի կը դառնար դաշտին բոլոր կողմերէն:

Ու այդ խորհրդաւոր պահէն ետք, շեփորի երեք երկար կանչեր ազդանշանը կու տային Հ.Մ.Ը.Մ-ի միջ-մասնաճիւղային խողերու տողանցքին սկսելուն:

Ու հիմա հայ մարդ, դուք երբեւէ տեսա՞՞ծ էք, դուք ըմբռնեա՞՞ծ էք Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի սկաուտական խումբերուն տողանցքը, երբ անոնք նոյն տարագը հագուած, կարգ ու կանոնով շարք կազմած, համաչափ քայլերով ու Հ.Մ.Ը.Մ-ի Հայկալի նուագախումբին առաջնորդութեամբ կը տողանցեն պատուոյ ամպիոնին առջեւէն, հազար-հազար ժողովուրդին առջեւէն՝ յարգանքի բարեւ տալով, ճակատները վեր ու



հպարտ, ազգային ոգիով առլցուն ու առնական: Կը տողանցէին՝ դէպի ազգային տեսլական, դէպի հայ ու Հայաստան: Կարծես հայոց բանակն էր կ'անցնէր: Մինչ օտար հողը կը թընդար անոնց ոտքերուն տակ: Քանի տողանցող այդ արիարենոյճները շատ լաւ գիտէին, թէ դաշտ եկած հայ ժողովուրդին գաւակները ի՞նչ կ'ակնկալեն իրենց կորովի քայլածքէն: Իրենց խրոխտ նայուածքէն ու հայու վայել կեցւածքէն: Անոնք կը տողանցէին՝ հայոց Եռագոյնը իբրեւ պետականութեան դրօշ վեր-վեր պարգած: Անոնք կը տողանցէին՝ դէպի սիրտը թափառական հայուն, որ հայրենի հողին կարօտով կ'ապրէր: Ու հազար-հազար ծափ ու հազար-հազար հայ մամիկներու թաց աղօթք, իբրեւ սէր ու գուրգուրանք, իբրեւ աստուածային օրհնութիւն կը տեղար անոնց գլխուն վերեւ: Մինչ հայ պապուկին սիրտը հրճուանքէն կը դողդղար, կ'ըլլար կենսատու երագ, կ'ըլլար հայ ու Հայաստան:



Հայ մարդ, իրաւ, դուք տեսա՞՞ծ էք Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարքերուն կեցուածքը կուռ ու արի, քայլուածքը պիրկ ու զօրեղ: Դուք տեսա՞՞ծ էք այդ առնական երթէն ու այդ կենսատու շքերթէն հմայուած քանի՛-քանի՛ երիտասարդներ կը դառնային Հ.Մ.Ը.Մ-ի տեսլականի նուիրուած ուխտաւոր: Ու քանի՛-քանի՛ մայրեր իրենց գաւակներուն ձեռքէն բռնած՝ կը բերէին ու կը յանձնէին Հ.Մ.Ը.Մ-ի բազինին, հոն դաստիարակուելու, հոն դարբնուելու իբրեւ հայ թէ իբրեւ մարդ:

Ու երբ տողանցող վերջին խումբն ալ կու գար ու կը գրաւէր դաշտին վրայ իրեն վերապահուած վերջին տեղը ու կ'ամբողջանար շարքը տողանցքին, յանկարծ կը լսուէր Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական



ընդհանուր խմբապետին գոռ կանչը:

Ընդհանո՛ւր խումբ, քայլ առա՛ջ, օ՛ն:

Ու դաշտին վրայ բոլոր խումբերը մէկ խումբ կազմած՝ ինչպէս կանոնաւոր բանակ, ինչպէս հայոց այրուծի, կ'արշաւէին դէպի առաջ, կ'արշաւէին դէպի պատուոյ ամպիոն, դէպի ժողովուրդ ու մարդ կը տարուէր կարծելու թէ հիմա պիտի ըլլայ իրարանցում: Բայց յանկարծ նորէն կը լսուէր սկառուտական ընդհանուր խմբապետին կանչը:

Ընդհանուր խումբ, կա՛ց,- եւ անոր կը յաջորդէր,- ընդհանո՛ւր խումբ, պատուի ա՛ռ:

Ու բոլոր խումբերը, ի յարգանք ժողովուրդին, բարեւի կը կենային: Բայց,

Յանկարծ բոլոր հանդիսականները՝ մեծ թէ պզտիկ, նահանգապետ թէ քաղաքապետ, օրուան նախագահը թէ բարձրաստիճան գինուորական, հայոց աւագանին թէ աւելի քան քսանհինգ հազար մարդ մէկ մարդու պէս ոտքի կանգնած կը ծափէին, կը ծափէին ու քսանհինգ հազար մարդու սիրտ կը հրճուէր, կ'ըլլար խինդ, կ'ըլլար աստուածային օրհնութիւն: Ու, հայ պապուկին խոնաւ



աչքերէն ուրախութեան արցունք կը ծորէր:

Այսօր ես, ութսունհինգ տարիներու բեռը շալակած, այդ անոյշ, խնդուն օրերուն կրկնութիւնը կը ցանկամ տեսնել...

*The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby*

**HOTEL**



# PAVILLON MONCEAU PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating/air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.

The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com

Studio/VEEEN 2005 PARIS





ՍԿԱՌՈՒՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԻՆ ԾՆՆԴԵԱՆ  
150ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ՍԿԱՌՈՒՏՈՒԹԵԱՆ  
ՀԻՄՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

# ՍԿԱՌՈՒՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ՝ ՊԷՅՏԸՆ ՓԱՌԻԸ

- 1884ին կը վերադառնայ Անգլիա:
- 1885ին կը գրէ «Հետախուզութիւն» եւ «Ուղեցոյց ձիաւորներու համար» գիրքերը:
- 1887ին կը ճամբորդէ Ափրիկէ:
- 1888ին սկանստես կ'ըլլայ զուլուներու պատերազմին՝ Ափրիկէի մէջ:
- 1890ին, մօրեղբօր հետ կ'անցնի Մայլթա կղզին, ապա՝ Թուրքիա:
- 1893ին կրկին կը դիմէ բանակ եւ կը փոխանցուի իր առաջին զօրաբաժինը՝ Հնդկաստան:
- 1896ին կը վերադառնայ Անգլիա եւ կը ստանայ գնդապետի աստիճան:
- 1897ին կ'անցնի Ափրիկէ:
- 1899ին իր զինուորներով կը պաշարուի Մաֆքինի մէջ: Շնորհիւ իր բացառիկ կարողութեան, լաւապէս կը մարզէ տեղւոյն բնակչութիւնը՝ մինչեւ իսկ պատանիները:
- 1899ին կը գրէ «Յառաջապահներու համար» գիրքը:
- 1900ին Մաֆքինիի պաշարումը վերջ կը գտնէ անգլիացիներու յաղթանակով: Պէյտըն Փաուըլ մեծ համբաւ կը շահի ու կը ստանայ զօրավարի աստիճան:
- 1900ին կը մարզէ եւ կը պատրաստէ Հարաւային Ափրիկէի 9000նոց ոստիկան զօրաց զօրաբաժինը: Այս զինուորները կը մարզէ «Յառաջապահներու համար» գիրքով տուած գաղափարներուն հիմամբ, այսինքն՝ խմբակային դրութեամբ: Զինուորներուն նշանաբանն էր՝ «Միշտ պատրաստ»:
- 1903ին կը նշանակուի Անգլիոյ թագաւորական ձիաւոր գունդերու ընդհանուր քննիչ:
- 1907ին իր պաշտօնակիցներու եւ ծանօթներու զաւակներէն բաղկացած պատանիներու խումբով մը կը կազմակերպէ իր տեսակին մէջ եզակի բանակում մը՝ Պրատուսի կղզիին մէջ: Ապա կը սկսի պատանեկան ու երիտասարդական շարժումներով հետաքրքրուիլ եւ իր կարծիքները հրատարակել երկչաբաթեայ թերթերով, նիւթ ունենալով պատանիներու դաստիարակութիւնը:
- 1908ին կը հրատարակէ «Հետախուզութիւն տղոց համար» գիրքը:
- 1909ին տեղի կ'ունենայ սկաուտական առաջին ռեյիւն,

**Ա**նգլիացի զօրավար Սըր Ռոպըրթ Սթիվնսըն Սմիթ Պէյտըն Փաուըլ օֆ Ճիլուելի, ծնած է 22 Փետրուար 1857ին:

3 տարեկանին կը մահանայ հայրը:

13 տարեկանին կը յաճախէ երկրորդական վարժարան: Այդ ժամանակ, թէեւ դասերուն մէջ փայլուն աշակերտ էր, սակայն յաճախ փախուստ կու տար դասապահներէն եւ մօտակայ անտառներուն մէջ իր ժամանակը կ'անցընէր բնութիւնը ուսումնասիրելով եւ հետախուզելով:

1876ին կը դիմէ զինուորական վարժարան եւ բարձր գնահատանքով կ'ընդունուի: Զերծ կը կացուցուի զինուորական մարզումներէ, իր փայլուն կարողութիւններուն համար: Անմիջապէս կը դրկուի Հնդկաստան, մաս կազմելու տեղւոյն անգլիական զօրաբաժինին: Կարճ ատեն մը ետք կը հիւանդանայ եւ կը ստիպուի կիսատ ձգել զինուորական դասերն ու բանակը: Իր ժամանակը լեցնելու համար մաս կը կազմէ թատերախումբի մը, իբրեւ սկսնակ դերասան:

Քրիսթիան Փէլճյանի մէջ, ուր սկառտները առաջին անգամ ներկայ կ'ըլլան սկառտական տարագրով:

1910 Մայիս 7ին կը հրատարակուի բանակէն եւ կը նուիրուի սկառտութեան:

1912ին սկառտութիւնը արդէն կը տարածուի աշխարհի չորս կողմերը: Պոլսոյ մէջ կը կազմուին հայկական առաջին սկառտական խումբերը:

1916ին կը սկսի գայլիկական շարժումը:

1918ին կը սկսի երէցական շարժումը:

1919ին կը սկսին սկառտ Առաջնորդներ պատրաստելու դասընթացները Ճիլիլի Փարքի մէջ:

1920ին տեղի կ'ունենայ առաջին համաշխարհային Գեմպոլիս, ուր Պէյտըն Փառուլ կը ճանչցուի իբրեւ աշխարհի գլխաւոր սկառտը:

1938ին Պէյտըն Փառուլ հանգստեան կը կոչուի եւ կը մեկնի Ափրիկէ՝ Քենիա, ուր կ'անցընէ կեանքին վերջին տարիները:

8 Յունուար 1941ին Պէյտըն Փառուլ կ'աւանդէ հոգին:

### ՊԷՅՏԸՆ ՓԱՌԻԼԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆԸ

Պէյտըն Փառուլ եղած է ուշադիր դիտող եւ տեսնող: 1900ական թուականներուն, երբ կը ծառայէր անգլիական բանակին, Հնդկաստանի, Աֆղանիստանի եւ Ափրիկէի մէջ, առիթը ունեցած է ուսումնասիրելու այդ երկիրներու բնիկ ժողովուրդներուն ապրելակերպը:

Բնութեան եւ դժուար կեանքի պայքարին մէջ, ժողովուրդներու կիրարկած լաւ յատկանիշները տեսած ըլլալով, ան ջանացած է այդ յատկութիւնները սորվեցնել իր գինուորներուն:

Զինուորը պէտք էր տեղեկանար բնութեան մէջ պաշտպանուելու ձեւերուն: Հետախոյզի արկածախնդրական կեանքը պէտք է ուսումնասիրէր եւ կարենար ինքզինքին օգնել բնութեան մէջ: Այս նիւթերու մասին գրած է քանի մը գիրքեր, որոնցմէ գլխաւորն է՝ «Հետախուզութիւն» գիրքը: Այս գիրքով ան կը բացատրէ բնութեան մէջ հետքեր մեկնաբանելու, թշնամիէն առանց նշմարուելու կարենալ տեղափոխուելու, գայն լրտեսելու եւ տեղեկութիւն քաղելու ձեւերը:

1885ին այլ գիրքով մը՝ «Ուղեցոյց ձիւաւորներու համար», Պէյտըն Փառուլ կը կեդրոնանար յատկապէս հետախոյզ խումբի մը կազմակերպչական կառոյցին վրայ, աւելի յստակացնելով բանակելու, հետախուզելու, նշմարելու, պատկեր-

ներ գծելու եւ տեղեկագիր պատրաստելու ձեւերը:

1899ին Պէյտըն Փառուլի գաղափարները սկսան տարածուիլ, երբ ան գրեց «Յառաջապահներու համար» գիրքը: Այս գիրքով ան ոչ միայն կը խօսէր հետախոյզ գինուորի մը յատկանիշներուն մասին, այլեւ՝ կը բացատրէր այն միջոցները, որոնցմով կարելի էր զարգացնել այս յատկանիշները: Ան գլխաւորաբար կեդրոնացած էր քաջութեան, ինքնահաստատման, ինքնապատահութեան, զգուշութեան եւ ապահովութեան յատկութիւնները գինուորին մօտ զարգացնելու գործնական միջոցներուն վրայ:

Մէջըբերում մը ներկայացնենք այդ գիրքէն, ուր կ'ըսէ՝ «Կան մարդիկ, որոնց չի պակսիր քաջութիւնը, նոյնիսկ մահուան գնով արգելքներ եւ դժուարութիւններ դիմակալելու, սակայն մեզի պէտք են հետախոյզներ, որոնք ոչ միայն քաջաբար դիմակալեն իրենց պարտականութիւնը, երթալով ուր որ պէտք է, այլ՝ գիտնան ինչպէս ողջ առողջ վերադառնալ ու փոխանցել քաղուած տեղեկութիւնները»: Այս գիրքին արժէքը կը կախանայ ոչ միայն իր գործնական գիտելիքներուն մէջ, այլեւ՝ գիտելիքներու փոխանցման համար տրուած լայն բացատրութիւններուն մէջ: Այս մէկը պայմանաւորուած էր 5-6 անձերէ բաղկացած խմբակներ կազմելով: Անոնք իրարու հետ կը մրցին, գծագրութեան, ուշադիր դիտելու, նշմարելու, հետախուզելու եւ այլ խաղերու միջոցով: Այսպէսով, Պէյտըն Փառուլ խաղը եւ մրցակցութիւնը կը կիրարկէր գինուորի մարզումին եւ դաստիարակութեան համար: Այս գործելակերպին տեսութիւնն էր, որ օրին տարածուեցաւ բանակէն դուրս եւ լայն տեղ գտաւ կրթական եւ դաստիարակչական մարզերու մէջ:

1900ին, պոէրներու քաղաքացիական պատերազմի նախօրեակին, Պէյտըն Փառուլ առիթը ունեցաւ իր տեսութիւնները իրագործելու եւ անոնց արժէքը փաստելու: Արդարեւ, երկու ամսուան ընթացքին ան կարողացաւ պատրաստել կամաւորներէ բաղկացած հետեակ երկու զօրագունդեր, որոնք Մաֆիքին աւանի պաշարման ընթացքին մեծ դեր ունեցան երկար դիմադրութեան եւ վերջնական յաղթանակը տանելուն մէջ: Այս պատերազմին, նոյնիսկ պատանի տղաք, մարզուած իր կողմէ, մեծ օգտակարութիւն ունեցան քաղաքի դիմադրութեան կազմակերպման մէջ:

Այլեւս փաստուած էր Պէյտըն Փառուլի դաստիարակչական եւ մարզումի տեսութեանց արժէքն ու կարեւորութիւնը:

1907ի սկիզբը երբ սկսաւ Բրիտանիոյ ազգային զօրագունդի մարզումի աշխատանքներուն, ան հրատարակեց նոր գիրք մը՝ «Յառաջապահներ» («Ըսթաութս») անունով: Այս գիրքով, մարզումի իր տեսութիւնները բերեղացած էին նորանոր փորձառութիւններով, որոնք տարածուեցան բանակէն դուրս եւ կիրարկուեցան երիտասարդական շարժումներու կողմէ:

Այդ օրերուն, Պէյտըն Փառուլ տակաւին գինուորական ծառայութեան մէջ էր եւ չէր մտածեր սկառտութեան մասին, իբրեւ պատանեկան առանձին շարժում, սակայն, գաղափարը տարածուած էր արդէն եւ թաղերու մէջ տղաք իրարու մօտ գալով՝ խմբակներ կը կազմէին մրցելու համար ուրիշ թաղերու տղոց հետ:

Սկառտիկ մը խանդավառող մարպանք մըն է, որ պատանիին մէջ կը վարգաջնէ կորովը, ճկունութիւնը, ուժը եւ ոգեւորութիւնը, հասցնելով պայն այսպէս սկառտիկ մի մէկ ուրիշ նպատակին, այսինքն՝ պատրաստել արի մարդիկ: Ան իր մէջ պարունակելով նաեւ մարպանքի բոլոր տեսակները, անոնց վրայ կ'աւելցնէ «հաճոյալի խաղ»ի առաւելութիւնը

### ՊԷՅՏԸՆ ՓԱՌԻԼԻ





## ՄԿԱՌՒՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ


-Ա-

**Յակոբ Կարապետեան/Աքելյա  
ՄԱՆ ՖՐԱՆՍԻՍԲՕ**

**Ս**կաուտութիւնը ժամանց չէ միայն, այլ՝ օգտակար եւ գործնական դաստիարակութիւն, որ ենթական կը մղէ իր թերութիւններուն եւ սխալներուն դէմ պայքարելու եւ սրբագրելու զանոնք, առողջ դատողութեամբ եւ գործելակերպով, ունենալու համար առողջ մարմնի մէջ՝ առողջ միտք:

Սկաուտութիւնը պէտք է բացօդեայ կիրարկել, քանի որ գայլիկներուն եւ արի-արեւոյճներուն նկարագիրները աւելի ճիշդ եւ լաւ կարելի է ուսումնասիրել խաղերու, արշաւներու, բանակումներու եւ գիտելիքներու ճամբով:

Ներկայի արդիական, հաճելի, դիւրին, նաեւ՝ ազատ պայմանները ձեռով մը արգելք կ'ըլլան գայլիկական եւ սկաուտական աշխատանքներուն: Մենք ալ մեր կարգին միջոցներ եւ պայմաններ ստեղծենք, հաճելին եւ օգտակարը կիրարկելով, մեր գայլիկները եւ սկաուտները աւելի հետաքրքրելու համար: Մենք միջազգային, հայկական եւ Հ.Մ.Ը.Մ.ական մեթոտներուն կը հե-



տեւինք եւ միջազգային սկաուտական կեդրոնէն ալ գովասանքով վաւերացած ենք: Ներկայ մեր Աքելյաներէն եւ Խմբապետներէն շատ ակնկալութիւններ ունինք, որովհետեւ մեր սերունդէն աւելի զարգացած եւ լաւ պայմաններու մէջ են անոնք:

Պանծալի Հ.Մ.Ը.Մ.ի 89ամեակին առիթով, փառք ու պատիւ կ'ընծայենք անցեալի եւ ներկայի պատուական մեր բոլոր ղեկավարներուն, ամէն մարզի

մէջ: Նոյն առիթով, երկար տարիներու մեր փորձառութիւններուն եւ ուսումնասիրութիւններուն արդիւնքները կը ներկայացնենք յօդուածաշարքով մը, յուսալով որ ան արժանանայ նոր սերունդին ուշադրութեան:

### ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Գայլիկական վոհմակները կ'ունենան ընդհանրապէս 4 կամ 6 վեցեակներ, վեցեակապետ եւ փոխ մը, 1-2 վարիչներ,





2 կամ 3 վեցեակներու համար՝ պէտք է ըլլան միաստղ եւ երկաստղ, կարգապահ եւ լաւ հետեւող գալլիկներ՝ Աքելլա մը (ծեր գայլ), որ մղիչ ուժն է վոհմակի մը, օգնական ունենալով Պալու մը, որ մոկլիին դաստիարակը եղած է Պաղիրա մը, յովազ, որ մոկլիին որսորդութիւն սորվեցուցած է:

Գալլիկներու շարժումը առնուած է գալլերու ընտանեկան կեանքէն եւ կենցաղէն, քանի որ գալլերը աշխարհի ամէնէն կազմակերպուած կենդանիներն են: Գալլիկները կը պատկերացնեն գալլերուն ձագերը, սկառտները՝ գալլերը, պարմանները (երէցները)՝ ծեր գալլերը:

Մոկլիները եւ թռչնիկները կը պատկերացնեն մանկամտուրի աշակերտները, գալլիկները եւ արծուիկները՝ մանկապարտէզի աշակերտները, արի-արենոյշները՝ նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտները, պարման-պարմանուհիները՝ համալսարանի ուսանողները:

Մոկլիներով եւ թռչնիկներով, 3-5 տարեկաններ, կարելի է երկու խումբ կազմել, երկու պատասխանատուներով, որոնք պարտին զիւրին խաղերով, պարերով, երգերով, զանազան գուլարձալիքներով եւ գիտելիքներով զանոնք հետաքրքրել:

Միայն գալլիկներով, 6-10 տարեկաններ, կարելի է կատարեալ վոհմակ մը կազմել, Աքելլաներով, Պալուներով եւ Պաղիրաներով մեր բոլոր գալլիկական օրէնքները, գիտելիքները եւ արարողութիւնները գործադրելու եւ զանոնք հետաքրքրական դարձնելու համար:

Միայն արծուիկներով, 6-10 տարեկաններ, կարելի է երամներ կազմակերպել խմբապետուհիներով, եւ աւելի աղջիկներու յատուկ գիտելիքներով, պարերով, երգերով ու խաղերով զանոնք միութեան կապել:

Շատ օգտակար եւ գործնական է, որ գալլիկները, արծուիկները, արինները եւ

արենոյշները առանձին հաւաքոյթներ ունենան, աւելի ուշադրութեամբ եւ հետաքրքրութեամբ հետեւելու համար, նաեւ սենեակ մը՝ իրենց ձեռնային աշխատանքները ցուցադրելու եւ խմբակային ժողովները կատարելու համար:

Վոհմակ մը պէտք է ունենայ տախտակէ գալլի գլուխով թոթեմ մը, հաստատուած 180 սմ՝ գաւազանի մը վրայ, ծայրը սուր երկաթով՝ գաւազանը կարելի է նկարագարողէ գունաւոր, կենդանիներու նկարներով՝ թոթեմին տակը կըր տախտակ մը, որուն վրայ կը դրուի շահող վեցեակին գոյնը (մրցումներու) եւ 3 գալլիկներու անունները, Ա. Բ. Գ., ժապաւէնին վրայ փակցուած, իսկ թոթեմէն վար, պողպատ գամ մը կը գամուի: Ամէն անգամ որ գալլիկ մը խոստում կու տայ, իր անունը-մականունը, խոստման թուականը պիտակի մը վրայ գրուած՝ գամին վրայ կ'անցնի: (Շաք. 1)



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Yerevan**  
32-38, Hanrabedoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am

[www.europehotel.am](http://www.europehotel.am)



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԹԵՀՐԱՆ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ Հ.Մ.Ա.Կ.Ի 22ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Հայ Մշակութային Արարատ Կազմակերպության 22րդ Պատգամաւորական Ժողովին մասնակցելու համար, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան երկանդամ պատուիրակութիւնը, բաղկացած՝ ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանէ եւ եղբ. Պատրիկ Կիւլպէնկեանէ, Թեհրան այցելեց 14-18 Յունուար 2007ին, ընդառաջելով Հ.Մ.Ա.Կ.Ի Կեդրոնական Վարչութեան հրահանգին:

Թեհրանի օդակայանին մէջ, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եղբայրները դիմաւորուեցան Հ.Մ.Ա.Կ.Ի սկաուտներուն եւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին կողմէ: Յաջորդ օր, Երկուշաբթի, 15 Յունուարին, եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան եւ Պատրիկ Կիւլպէնկեան այցելեցին «Ալիք» օրաթերթի խմբագրատուն, որուն զանազան բաժիններուն ծանօթանալէ ետք՝ անոնք հարցազրոյց մը ունեցան խմբագրութեան հետ: Ապա, անոնք այցելեցին «Արարատ»



Հ.Մ.Ը.Մ.Ի եւ Հ.Մ.Ա.Կ.Ի ատենապետները յուշանուէրներ կը փոխանակեն:

մարզական եւ «Սիփան» Մշակութային Միութեան կեդրոն, ամէնուրեք արժանանալով ջերմ ընդունելութեան:

Յաջորդ օր, գլխաւոր այցելութիւնը կատարուեցաւ Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդարան: Առաջնորդ Սեպուհ Արք. Սարգիսեանի քաղաքէն բացակայութեան պատճառով՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցիչները ընդունեց թեմական խորհուրդի ատենապետ Նորայր Արամեան:

Երեկոյեան տեղի ունեցաւ Հ.Մ.Ա.Կ.Ի 22րդ Պատգամաւորական Ժողովին բացումը, որուն առաջին անգամ ըլլալով իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.Ի եւ Համազգայինի Կեդրոնական Վարչութիւններու ներկայացուցիչները: Այս առիթով, ողջոյնի խօսք արտասանեց ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ողջոյնի խօսք արտասանեց նաեւ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ներ-

կայացուցիչ Գեղանի Էթիէմեգեան: Եղբ. Մկրտիչեան իր խօսքին մէջ ամփոփ ներկայացումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի մօտիկ անցեալին ու ներկային, ապա ան նշեց, որ այսօր ազգովին կը գտնուինք մեր ազգին սպառնացող վտանգներն ու դժուարութիւնները յաւելեալ վճռակամութեամբ եւ միացեալ ուժերով դիմադրաւելիւ հրամայականին առջեւ:



Հ.Մ.Ա.Կ.Ի Կեդրոնական Վարչութեան հետ հանդիպումի պահուն:

«21րդ դարու բազմատեսակ մարտահրաւէրները, յայտնեց եղբ. Մկրտիչեան, մեզ կը մղեն պահ մը կանգ առնելու եւ միասնաբար խորհելու, առաջադրանքներ ճշդելու, բարւոք լուծումներ ապահովելու, թեւ-թիկունք տալով եւ ամէն ճիգ ի գործ դնելով՝ մեզի վստահուած նաւը պայծառատես ու հեռատես քաղաքակա-նութեամբ այս օրերու ալեկոծ ջուրերուն վրայ ինքնավստահ նաւարկելու համար»:

Այնուհետև, Հ.Մ.Ա.Կ-ը ողջունելով, Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան ատենապետը իր խօսքին մէջ ընդգծեց, որ «Իսկապէս մեծ ուրախութիւն է մեզի համար ըլլալ կազմակերպութեան մը հետ, որ անցնող ավելի քան 50 տարիներուն իր դրոշմն ու կնիքը տուաւ այս գաղութին եւ անոր ճամբով սիւնաքահայ մեր կեանքին: Արդարեւ, ո՞վ չէ լսած Հ.Մ.Ա.Կ-ի մասին, ո՞վ չէ հմայուած անոր կարգապահ ու օրինակելի շարքերով: Ո՞վ չէ խանդավառուած անոր մարզական խումբերուն յաջողութիւններով: Այդ բոլորին կողքին, ու այդ բոլորէն առաջ, սակայն, Հ.Մ.Ա.Կ-ը մեզի համար եղած է ու կը մնայ ազգային հպարտութիւն ներշնչող այն մեծ կազմակերպութիւնը, որ գիտէ իրեն դիմողներուն տալ հայ ըլլալու գաղտնիքը եւ հայ մնալու գրահը»:

Եղբ. Մկրտիչեան անդրադարձաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Մ.Ա.Կ. գործակցութեան երեւոյթին եւ ըսաւ, որ «Նախապէս, տասնամեակներ շարունակ, Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Մ.Ա.Կ. ունեցած են պարագայական գործակցութիւն: Մարզական խումբեր մասնակցած են այս կամ այն միութեան կազմակերպած մարզախաղերուն: Վերջին շրջանին սակայն, պարագայական այդ գործակցութիւնը ստացաւ կանոնաւոր բնոյթ, երբ Հ.Մ.Ա.Կ-ի սիրելի սկաուտները իրենց մասնակցութիւնը բերին համա-Հ.Մ.Ը.Մ-ական մեր բանակումներուն, մարզիկներ մասնակցեցան համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերուն, խմբապետներ ներկայ գտնուեցան համա-Հ.Մ.Ը.Մ-ական խմբապետական համագումարին եւ միութեան պաշտօնաթերթ «Մարգիկ»ը սկսաւ արձագանգ հանդիսանալ Հ.Մ.Ա.Կ-ի կարգ մը լուրերուն»:

Իր խօսքը եզրափակելով, եղբ. Մկրտիչեան մաղթեց, որ Պատգամաւորական Ժողովին արտասանուած ողջոյնի խօսքը գրաւական մը ըլլայ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Մ.Ա.Կ. վաղուան գործակցութեան ընդլայնման ու ամրապնդման, վասն հայութեան եւ Հայաստանի»:

Յաջորդող երկու օրերուն, Պատգամաւորական Ժողովի աշխատանքներու լուսանցքին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեղրոնական Վարչութեան եղբայրները ծանօթացման հանդիպումներ ունեցան Հ.Մ.Ա.Կ-ի Թաւրիզի Ուրմիոյ, եւ Շիրազի վարչու-



Կեղրոնական Վարչութեան Անդամները Հ.Մ.Ա.Կ-ի սկաուտներու հետ:



Հ.Մ.Ը.Մ-ի Անդամները Հ.Մ.Ա.Կ-ի Թաւրիզի, Ուրմիոյ եւ Շիրազի պատուիրակուորներուն հետ:

Թիւններու ներկայացուցիչներուն հետ: Անոնք նաեւ այցելութիւն մը տուին Հ.Մ.Ա.Կ-ի սկաուտական կեղրոն:

Եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան եւ Պատրիկ Կիւլպէնկեան Պէյրութ վերադարձան Հինգշաբթի, 18 Յունուարի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Մ.Ա.Կ. գործակցութեան սերտացման եւ զարգացման թափ տուող նոր հեռանկարներով:





# ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԱՐԱՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ 22ՐԴ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

## Թղթակից ԹԵՆՐԱՆ

**16** Յունուար 2007ի երեկոյան ժամը 6.30ին, Թեհրանի «Արարատ» Մարզալանի Ս. Դաւիթ սրահում հանդիսաւոր բացումը կատարուեց Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան 22րդ Պատգամաւորական Ժողովին, որին՝ բացի շուրջ 40 միութենականներից, որոնք եկել էին որպէս ազատ ունկնդիրներ, իրենց ներկայութեամբ յարգել էին Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Սեպուհ Արք. Սարգսեանի ներկայացուցիչներ՝ Ղեւոնդ Քահանայ Լոյսածեան եւ Ռուբէն Քահանայ Միսիսեան, Թեհրանի Թեմական Խորհրդի ներկայացուցիչներ՝ ատենապետ՝ Նորայր Արամեան եւ Անէթ Բաղդասարեան, «Ալիք» հաստատութեան ներկայացուցիչներ՝ Վիգէն Բաղումեան ու Գեւրգ Մկրտչեան, ինչպէս նաեւ Իրանի իսլամական խորհրդարանում հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Գէորգ Վարդանեան:

Նիստը բացուած յայտարարուեց ժամը 6.30ին, Ռուբէն Քահանայ Միսիսեանի արտասանած Տէրունական արթթով:

Ապա, մուտք գործեց կազմակերպութեան դրօշը՝ սկսուտական միութեան անդամ, Վարիչ Առաջնորդ Արայիկ Նազարեանի միջոցով, որից յետոյ հնչեց Հ.Մ.Ա.Կ.ի հիմնը:

Բացման եւ բարի գալստեան խօսք ընթերցեց Հ.Մ.Ա.Կ.ի Կենտրոնական Վարչութեան նախագահ Հենրիկ Խալոյեանը: Ան իր խօսքի աւարտին, որպէս ժամանակաւոր նախագահներ, բեմ հրաւիրեց ժողովին վճռական ձայնի իրաւասու-



Թեամբ մասնակցող երիցագոյն անդամ Նելլա Ղարիբեանին եւ կրտսերագոյն անդամ Ժորժիկ Աղայեանին՝ վարելու համար նիստը:

Նախագահութիւնը նախ բեմ հրաւիրեց Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Սեպուհ Արք. Սարգսեանի ներկայացուցիչ՝ Ղեւոնդ Քահանայ Լոշխաճեանին, որը փոխանցեց Սրբազան Հօր պատգամը:

Դրանից յետոյ ներկաները անցեալ շրջանի ընթացքին մահացած անդամներին յիշատակը յարգեցին՝ մէկ ռուպէ յտընկյալ լուծեցամբ:

Ապա, նախագահութիւնը ստուգեց եւ ժողովի հաստատմամբ ընդունեց միութիւնների պատգամաւորների եւ վարչութիւնների ու մարմինների լիազօրագրերը, որով ժողովը պաշտօնական ճանաչեց 31 վճռական ձայնի իրաւասութիւն ունեցողներից 30ի ներկայութիւնը:

Այնուհետեւ կատարուեց մնայուն նախագահութեան ընտրութիւն. ժողովը բաց քուէարկութեամբ որոշեց ունենալ 3 նախագահներ՝ Հրաչ Զարիֆեան, Հանրի Քոչարեան եւ Հարմիկ Զովէյեան:

Ապա, ժողովը ընթացաւ խորհրդակցական ձայնի իրաւունքով հրաւիրեալների ընտրութեամբ: Փակ քուէարկութեան արգիւնքում ընտրուեցին Թովմաս Թովմասեանց (Սարուխանեան), Ալիդա Յովհաննիսեան, Շերլի Աւետեան, Ալֆ-



րէդ Հաւան եւ Ռայմոնդ Սաչատրեան:

Յաջորդեց կազմակերպութեան անցեալ երկու տարուան գործունէութեան կապակցութեամբ պատրաստուած տեսափապաւէնի ցուցադրումը: Փոքրիկ դադարից յետոյ, նիստը շարունակուեց, ուր հերթաբար ելոյթ ունեցան՝ նախ Համագ-գային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Կենտրոնական Վարչութեան ներկայացուցիչ Գեղանի Էթիէմեզեանը, ապա Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտչեանը (խօսքին ամբողջութիւնը տեսնել առանձին-«Մ.»), որը նաեւ իր խօսքի աւարտին իր միութեան կողմից Հ.Մ.Ա.Կ.ի Կենտրոնական Վարչութեան նախագահին յանձնեց Հ.Մ.Ը.Մ.ի յուշանուէրը: Փոխադարձաբար, Կենտրոնական Վարչութիւնը Համագգայինի եւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչներին յանձնեց կազմակերպութեան յուշանուէրը:

Ապա, առիթ տրուեց Թեհրանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ներկայացուցիչ եւ կազմակերպութեան անդամ՝ Անէթ Բաղդասարեանին, խորհրդին պատգամը ուղղելու ժողովին, որից յետոյ արտայայտուեց կազմակերպութեան անդամ եւ Իրանի իսլամական խորհրդարանի հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Գէորգ Վարդանեանը: Վերջում իր արտայայտութիւններն ու բարեմաղթանքները ժողովին ուղղեց «Ալիք» հաստատութեան ներկայացուցիչ՝ Գեւիկ Մկրտչեանը:

Խօսքերի բաժինը աւարտուելուց յետոյ, Կարինէ Ղարախանեանը ընթերցեց Կենտրոնական Վարչութեան երկամեայ գործունէութեան բարոյական զեկոյցը:

22րդ Պատգամաւորական ժողովի դռնբաց նիստը աւարտուեց ժամը 11ին, որից յետոյ երէցների միութիւնը ներկաներին հիւրասիրեց թեթեւ ընթրիքով:

Յաջորդ օրերին, 8 նիստերի ընթացքում ժողովը զբաղուեց եւ իր լրումին հասցրեց բոլոր օրակարգերը, յաջորդ երկու տարիների համար կիրառելով մի շարք որոշումներ եւ վերջում ընտրեց Կենտրոնական Վարչութեան եւ հաշուեքննիչ մարմնի անդամներին:

### Հ.Մ.Ա.Կ.Ի ՆՈՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱԶՄԸ

Պատգամաւորական իր 22րդ ժողովին լոյսին տակ, Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութիւնը (Հ.Մ.Ա.Կ.) օժտուեցաւ իննանդամ նոր Կեդրոնական Վարչութեամբ մը, բաղկացած հետեւեալներէն.-

Էդուարդ Բաբախանեան - նախագահ  
Հրաչ Զարիֆեան - փոխ նախագահ  
Ժանէթ Թարվերդեան - քարտուղար  
Ռիթա Մարգարեան - գանձապահ  
Նորիկ Մանասերեան, Սերոժ Մատթեոսեան, Շերլի Աւետեան, Արբի Գալստեան, Ալեքս Կարապետեան - խորհրդակալներ

Նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը իր աշխատանքներուն անցնելով, սկստական պատասխանատու նոր կազմ՝ նշանակեց հետեւեալները.-

Արբի Զոհրաբեան - սկստապետ  
Արմինէ Մարգարեան - գերագոյն կազմի պատասխանատու

Շանթ Բաղրամեան - արիներու բաժինի պատասխանատու

Մարիէթ Մարտիրոսեան - կրտսերներու բաժինի պատասխանատու

Ադրինէ Դարասեան - արեւոյշներու բաժինի պատասխանատու





# Հ.Մ.Ա.Կ.Ի ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ԱՂՋԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ ԻՐԱՆԻ ԱՄՈՅԵԱՆ

**18** եւ 19 Յունուար 2007ին, Թեհրանի «Արարատ» մարզականին մէջ տեղի ունեցան Իրանի պասքեթպոլի աղջկանց բարձրագոյն դասակարգի աւարտական մրցումները, որոնց ընթացքին «Արարատ»ի աղջիկները պարտութեան մատնեցին «Մահրամ» (74-47) եւ «Ֆուլատէ Մոպարաքէ» (80-64) խումբերը եւ արժանացան Իրանի ախոյեանութեան փայլուն տիտղոսին:

Երկրորդ եւ երրորդ հանդիսացան «Ֆուլատէ Մոպարաքէ» եւ «Նաւթ»:

Բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան կը մասնակցէին 10 խումբեր: «Արարատ» երթ ու դարձի իր 18 մրցումներուն մնաց անպարտելի:

Յունուար 19ի երեկոյեան, խանդավառ մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ բաժակի եւ մետալներու տուչութիւնը: Այս առիթով խօսքեր արտասանեցին Իրանի պասքեթպոլի ֆետերասիոնի փոխ նախագահ Ֆաթեմէ Քարամզադէ, մրցումներու պատասխանատու Մանիփէ Պահրամի Մեհր, Հ.Մ.Ա.Կ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ Վովա Յովսէփեան եւ Թեհրան նահանգի պասքեթպոլի յանձնախումբի նախագահ Նուրբախշ:

Բաժակի յանձնումի ժամանակ բարձրախօսներէն հնչեց «Արարատ, իմ սիրելի խումբ» հայերէն երգը: Տեղի ունեցաւ հրավառութիւն: Այնուհետեւ, կենդանի երաժշտութեան զուարթ հնչիւններու ընկերակցութեամբ՝ Հ.Մ.Ա.Կ.ի կողմէ նուէրներ յանձնուեցան առաջինէն երրորդ հանդիսացած խումբերուն:



**Sarkis  
or  
Paul**

# SASSOUNIAN INC. Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street  
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220  
(213) 627-1206  
Outside Ca: 1-800-544-4419  
Fax: (213) 623-6981

[www.sassouniantools.com](http://www.sassouniantools.com)

E-mail: [info@sassouniantools.com](mailto:info@sassouniantools.com)



հային ճամպորիին, ներկայացնելով Հայաստանը, ըսաւ ան:

Ապա, հրաւիրուեցաւ Թեմակալ Առաջնորդը, որ իր խօսքը ներկաներուն ուղղելով շեշտը դրաւ հայ մանուկներու եւ պատանիներու դաստիարակման գործին վրայ՝ ներգրաւելու համար զանոնք մեր ազգային եւ միութենական կառույցներէն ներս: Ան իր գոհունակութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի կատարած աշխատանքներուն համար եւ բոլորին պատգամեց հաստատ մնալ նուիրումի եւ զոհաբերութեան արժեքներուն վրայ՝ սերունդներ դաստիարակելու նուիրական աշխատանքին մէջ: Ազգային Վարչութեան անունով ան շնորհակտրեց միութիւնը եւ Նոր Տարուան բարեմաղթութիւններ կատարեց բոլորին:

Յաջորդ խօսքը փոխանցեց Հայաստանի դեսպանը, որ շեշտեց թէ հայ մարդը կերտելու համար նախապայման է որ հայ մանուկը մեծնայ հայկական շրջանակի մէջ: Այսօրուան մեր ազատ եւ անկախ հայրենիքին համար Սփիւռքի մէջ կատարուող հայապահպանումը կարեւոր դեր ունի, որպէսզի հայ երիտասարդը կապուած մնայ հայրենիքին: Հայութեան օղակները, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, շարկապուած պէտք է մնան՝ ի խնդիր մեր ազգի պահպանման եւ հայոց պետականութեան հզօրացման, յայտնեց ան:

Հ.Յ.Դ. Յունաստանի Կ.Կ.ի անունով խօսք առաւ իր ներկայացուցիչը: Ան մաղթեց, որ 2007ն ըլլայ յաջողութիւններով լեցուն տարի մը Հ.Մ.Ը.Մ.ին համար՝ իր մարզական եւ սկստակական մարզերով: Ան շեշտեց, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը անվերապահօրէն կը գորակցի Հ.Մ.Ը.Մ.ին եւ կը քաջալերէ իր ազգանուէր գործունէութիւնը՝ ի խնդիր Հայ Դատի հետապնդման:

Վերջին խօսողը եղաւ Հայաստանի դեսպանատան գինուորական կցորդը, որ յայտնեց թէ 1919ին մեծանուն բանաստեղծ եւ մտաւորական Գէորգ Կառվարեանց հայոց բանակին համար գրեց «Յառաջ նահատակ» քայլերգը: 1923էն ետք այս քայլերգը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկստակութեան քայլերգը, իբրեւ շարունակութիւն հայոց բանակին: Հ.Մ.Ը.Մ.ը ամբողջ հայ ժողովուրդի յարատեւման մարմնացումն է: Իւրաքանչիւր հայ երիտասարդ պարտականութիւն պէտք է զգայ ծառայել Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս:

Առաջնորդ Սրբազան Հայրը կատարեց կարկանդակներու օրհնութիւնն ու բաշխումը, որմէ երկու բախտաւոր ներկաներ ստացան խորհրդանշական նուէրներ: Յաջորդեց հիւրասիրութիւն՝ մտերմիկ մթնոլորտի մէջ: Ներկաներուն բաժնրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան եւ Սկստակական Խորհուրդի 2007-2008 տարեշրջանի գործունէութեան ծրագիրը:

Առաջնորդ Սրբազան Հայրը կատարեց կարկանդակներու օրհնութիւնն ու բաշխումը, որմէ երկու բախտաւոր ներկաներ ստացան խորհրդանշական նուէրներ: Յաջորդեց հիւրասիրութիւն՝ մտերմիկ մթնոլորտի մէջ: Ներկաներուն բաժնրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան եւ Սկստակական Խորհուրդի 2007-2008 տարեշրջանի գործունէութեան ծրագիրը:

**Քերոր Էքիպեան ԱԹԷՆՔ**

**Հ**.Մ.Ը.Մ.ի Յունաստանի ընտանիքը, գլխաւորութեամբ Շրջանային Վարչութեան եւ մասնակցութեամբ միութեան մասնաճիւղերու վարչութեանց, սկստակական Շրջանային Խմբակետութեան եւ ծնողական միութեանց, աւանդական կարկանդակի բաշխման իր ելոյթը կատարեց Չորեքշաբթի, 24 Յունուար 2007ի գիշերը, Գոքինիոյ «Չաւարեան» կեդրոնի «Չաքարեան» սրահին մէջ: Ելոյթը իրենց ներկայութեամբ պատուեցին Թեմակալ Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեան, Ազգային Վարչութեան ատենադպիր Գեղամ Ետեմաճեան, կաթողիկէ համայնքի հովիւ Ռաֆայէլ Քհնյ. Շէֆիքեան եւ աւետարանական համայնքի հովիւ վերապատուելի Վիգէն Չորաքեան: Ներկայ եղան նաեւ Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Վահրամ Կաթոնեան եւ տիկինը, դեսպանատան քարտուղարուհի Լիլիթ Սարգսեան, գինուորական կցորդ՝ փոխ գնդապետ Սամուէլ Ռամազեան, Հ.Յ.Դ. Յունաստանի Կ.Կ.ի կողմէ Յակոբ Պետոյեան եւ Հ.Կ.Խաչի Շրջանային Վարչութեան ատենապետուհի Լուսի Շանկայեան: Ներկայ էր նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի պատուակալ նախագահ եղբ. Կարպիս Գուլումճեան:

Բազման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պողոս Չորաքեան, որ լաւագոյն տարուան մը մաղթանքները փոխանցեց ներկաներուն եւ շեշտեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ը, յատկապէս Սփիւռքի տարածքին, եղաւ հայրդիներու այն բանակը, որ հայրենասիրութիւն ջամբեց հայ երիտասարդութեան: Ան նշեց, որ 2007ը 95ամեակն է հայ սկստակութեան հիմնադրութեան, ինչպէս նաեւ՝ 100ամեակը համաշխարհային սկստակութեան հիմնադրութեան: Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Կ.ի անունով սկստակական փաղանգ մը պիտի մասնակցի սկստակական համաշխարհ-






# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԹԷՆՔԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՆՈՐ ՍԵՆԵԱԿԻՆ ԲԱՅՈՒՄԸ

## Կարպիս Գույումճեան ԱԹԷՆՔ


**Ա**թէնքի Լեոն եւ Սոֆիա Յակոբեան վարժարանի շրջափակին մէջ կատարուած շինարարական բարեփոխումներու հետեւանքով, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին տարիներու վարչական սենեակը վերջերս տեղափոխուեցաւ այլ տեղ, որուն բացումը հանդիսաւոր կերպով կատարուեցաւ Շաբաթ, 27 Յունուարի երեկոյեան, տեղւոյն «Աւետիքեան» սրահին մէջ:

Յայտնենք, որ վարժարանին շրջափակին մէջ եղող Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի վարչական եւ սկառուտական գոյգ սենեակները պատկերազարդուած եւ օտորւած են նոր գրադարաններով, որոնց մէջ ամփոփուած ու դասաւորուած են Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի եւ մանաւանդ Աթէնքի մասնաճիւղին 60 եւ աւելի տարիներու արխիւները, որոնց մասին պիտի ջանանք անդրադառնալ հետագային:

Հանդիսութեան բացումէն առաջ, հանդիսականները այցելեցին Հ.Մ.Ը.Մ.ի գոյգ սենեակները եւ հիացումով դիտեցին մասնաճիւղին հիմնադիրներուն, անցեալի վարչութիւններուն հին ու նոր խմբանկարները, խումբերուն ստացած բաժակները, բարենիշներու վրկայականները,



Հանդիսութեան հանդիսավար եղբ. Ալէքս Մուրատեան:



Պարգևատրեալներ՝ քոյր Ազնէ Սրապեան եղբայրներ Յակոբ Ծալվարճեան, Գէորգ Եսայեան եւ Վարուժան Զարմաքճեան:

դրօշակակիրները եւ այլ բաներ:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան շրջանի հոգեւոր հովիւ Նարեկ Քհնյ-Շահինեան, կաթողիկէ համայքի ժողովրդապետ Ռաֆայէլ Քհնյ. Շէֆիքեան, Աթէնքի ֆուլթպոլի ֆետերասիոնի նախագահ Փանայոթիս Տիմիթրիոս, Նէա Զմիռնիի փոքրաքաղաքապետներ՝ Վանկելի Խաչատուրեան եւ Փոլիտորաս Սիրիդոս, Հ.Մ.Ը.Մ.ի պատուոյ նախագահը, Շրջանային եւ Գոքինիոյ մասնաճիւղի վարչութիւններու,

կան Շրջանային Խորհուրդի, սկառուտական ծնողական մարմնի եւ շրջանի մէջ գործող միութիւններու ներկայացուցիչներ եւ սրահը լեցնող մարզասէր հանդիսականներ:

Հաղորդավարի դերով հանդիսութեան բացումը կատարեց եղբ. Ալէքս Մուրատեան: Ան ողջունեց հանդիսականները եւ ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը հիմնուած է Պոլսոյ մէջ, 1918ին եւ այնուհետեւ Սփիւռքի 26 երկիրներուն մէջ կը գործէ իր 98 մասնաճիւղերով, որոնցմէ մէկը Աթէնքի մասնաճիւղն է: Իր խօսքին մէջ եղբայրը անդրադարձաւ մասնաճիւղին ֆուլթպոլի, պասքեթպոլի, լողի եւ ճատրակի մարզիկներու թիւերուն եւ ունեցած գործունէութեան:

Ապա, մեծ պաստառի վրայ ներկայացուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղին անցեալի գործունէութիւնը:

Այս առիթով գնահատական արտայայտութիւններ ունեցան ֆուլթպոլի

Ֆետերասիոնի նախագահը, քաղաքապետները եւ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պօղոս Չոլաքեան: Ան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Աթէնքի քաղաքապետութեան, մասնաճիւղին «Առաքելեան-Կիւտէնեան» մարզադաշտը հիմնովին վերանորոգած ըլլալուն համար, յիշեց նաեւ Յունաստանի Փոլիթպոլի ազգային խումբին անցեալին մաս կազմած եղբայրներ Դանիէլ Դանիէլեանի, Վահագն Աբրահամեանի եւ Գրիգոր Աղանեանի անունները:

Մասնաճիւղէն ներս իրենց ունեցած երախտաշատ գործունէութեան համար գնահատական յուշանուէրներ ստացան քոյրեր Արփի Փափագեան, Ազնէս Սրապեան, եղբայրներ Յակոբ Շալվարճեան, Սերգօ Եթիմեան, Գէորգ Եսայեան եւ Վարուժան Չաքմաքճեան: Նոյնպէս՝ Տիմիթրիս Գրասաս, Նաթալի Թրամփալի, Գոսթաս Եորդիլու եւ Տանայի Գոքալի:

Պարգեւատրուեցան նաեւ Հայաստանի Արագած լեռան գագաթը բարձրացող եղբայրներ Սերգօ Աղապատեան, Կարօ Կենդանեան, Յակոբ եւ Զաւէն Գնունիներ եւ քոյր Սիւզի Աբարթեան:

Նարեկ Քհնյ. Հայրը օրհնեց օրուան կարկանդակը: Ապա բոլոր ներկաները ստացան իրենց բաժինը:

Եղբայր հաղորդավարը իր փակման խօսքով շնորհակալութիւն յայտնեց քոյր Ալիս Ֆուլուրեանին, եղբ. Մանուէլ Սաւուլեանին, նաեւ՝ տէր եւ տիկին Յակոբ եւ Վերգին Բալուխեաններուն, որոնք իրենց աջակցութեամբ եւ նուիրա-



Արագածի գագաթը բարձրացողներէն եղբ. Սերգօ Աղապատեան եւ քոյր Սիւզի Աբարթեան. քովը՝ եղբ. Կարպիս Գոյումճեան:

տրուութեամբ օգտակար եղան հանդիսութեան յաջողութեան:

Վերջաւորութեան, սրահին բակէն ներս, հանդիսութեան ներկայ եղողները սկստուական տեղւոյն ծնողական մարմնի անդամուհիներուն կողմէ մեծարուելէ ետք, մեկնեցան Հ.Մ.Ը.Մ-ական գոհունակ պահեր ապրած ըլլալու յիշատակով:

# Jewelry Burs from FOX! All shapes, all sizes! Here are just a few!




2245 E. Colorado Blvd. 104-240  
Pasadena, CA 91107 USA  
arak@foxburs.com



Contact: ARA KHATCHIKIAN  
Tel: 626-791-4327  
Fax: 626-791-0866

The Diamonds' Choice





# «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ ԿԸ ՎԵՐԱՆՈՐՈՂԵՆ ԻՐԵՆՑ ՈՒԽՏԸ

## Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

**Վ**արդանանց տօնակատարութեան գոլգաղիւ պող «Հայ Սկաուտի Օր»ուան առիթով, Կիրակի, 18 Փետրուար 2007ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիքանանի մասնաճիւղերու խմբապետական կազմերը, Շրջանային Սկաուտական Խորհուրդն ու խմբապետական կազմը ներկայ գտնուեցան Նորաչէնի Վարդանանց եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին, որուն ընթացքին իր պատգամը փոխանցեց Լիքանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան:

Առաջնորդը իր պատգամին մէջ անդրադարձաւ սկաուտներու դերակատարութեան՝ հայ ժողովուրդի կեանքին մէջ: Ան ըսաւ, որ տարագաւորները կը տարբերին մնացեալ ժողովուրդէն: Անոնք ունին յաւելեալ պարտականութիւններ եւ պարտաւորութիւններ, յատկապէս՝ կարգապահութեան եւ օրինապահութեան իմաստով:

Առաջնորդը խօսքը տարագաւորներուն եւ յատկապէս խմբապետներուն ուղղելով ըսաւ, թէ որեւէ գործունէութիւն պէտք է կատարել պատուով, այնպէս ինչպէս կը խոստանան խոստման արարողութիւններու ժամանակ: Այս առիթով ան հրաւիրեց խմբապետները՝ վերանորոգելու իրենց խոստումը: Խմբապետները, իրենց կարգին, յոտնկայս ու մտովին անգամ մը եւս վերանորոգեցին իրենց կատարած խոստումը:

Պատարագէն ետք, Շրջանային Սկաուտական Խորհուրդին եւ խմբապետական կազմին ընկերակցութեամբ, խմբապետները ուղղուեցան Ազգ. Եղիշէ Մանուկեան քոլէճի «Սի-

րան Մանուկեան» սրահը, ուր կէսօրուան ճաշի հիւրը եղան Առաջնորդ Սրբազանին:

Սրբազան Հօր աղօթքէն եւ օրհնութենէն ետք, ճաշին ընթացքին, Շրջանային Սկաուտական Խորհուրդին եւ խմբապետութեան անունով խօսք առաւ քոյր Իրմա Ճէրէճեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ, թէ անցեալին կար նմանօրինակ սովորութիւն մը, երբ սկաուտական կազմի խմբապետներ անհամբեր կը սպասէին սեղանակից դառնալու Գարեգին Բ. Կաթողիկոսին՝ ստանալու համար անոր օրհնութիւնը: Անցեալ տարի այդ սովորութիւնը վերանորոգուեցաւ ձեւով մը, երբ սկաուտական կազմը իւրապատուկ ձեւով նշեց «Հայ Սկաուտի Օր»ը, որմէ ետք խմբապետներ ճաշի հիւրը եղան Առաջնորդ Սրբազանին: Այս տարի եւս, նմանօրինակ հանդիպում մը տեղի կ'ունենայ: Օգտակար հանդիպում մը, որ առիթը կ'ընծայէ:-

- Մօտէն ծանօթանալու եւ երկուստեք արտայայտելու իրարու հանդէպ եղած հոգածութիւնն ու համակրանքը:

- Խոստանալու մնալ հաւատարիմ ու տիպար ազգայիններ՝ պատրաստելով ապագայ սերունդներ, որոնք պիտի քալեն մեր նախնիներուն ուղիով եւ պահեն ու պաշտպանեն հայ ազգին իրաւունքները:

Ճաշի մտերմիկ մթնոլորտէն ետք, Առաջնորդ Սրբազանը փոխանցեց իր պատգամը եւ ըսաւ, թէ խմբապետական կազմը իր աշխատանքներն ու գործունէութիւնը պէտք է կատարէ պատուով՝ ձգտելով լաւագոյնին: Ան օրինակ տալով ըսաւ, թէ իւրաքանչիւր խմբապետ պէտք է նմանի աղի, եւ համեմէ իրեն վստահուած աշխատանքները: Առաջնորդին պատգամէն եւ օրհնութենէն ետք, ներկաները նկարուեցան յիշատակի նկար մը եւ բաժնուեցան վերանորոգուած ու յարատեւ ծառայելու խոստումով:

# ԱՐԾՈՒԻԿ ԵՐԱՄԻ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

Թղթակից  
ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ



**24** և 25 Փետրուար 2007ի շաբաթավերջին, Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համալսարանի Արժուիկ Ա. երամը Կակուղ Թաթիկի, Մխասողի և Երկասողի երկօրեայ սեմինար մը կատարեց Արագածի «Դրօ» ակումբին մէջ:

Երկու օրուան ընթացքին, մասնակիցները ստացան գիտելիքներ և նոր ձեռով բացատրուած նիւթեր: Անոնք սորվեցան ձեռագիր աշխատանք պատրաստել և գիշերային արշաւ մը կատարեցին Արագածի և Նոր Մխի թաղերը:

Սկստուական երգերով ու կանչերով արժուիկները ազգային խանդավառ մթնոլորտ մը ստեղծեցին շրջանին մէջ:



## ...ԵՒ «ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ» ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Սեմինարէն շաբաթ մը առաջ, Կիրակի, 18 Փետրուարին, նոյն երամը այցելեց «Թոլնոց Բոյն» և հոն պատասպարուած փոքրիկներուն հետ նշեց Բարեկենդանի սօճը: Այս առիթով, արժուիկները փոքրիկներուն նուիրեցին իրենց պատրաստած ձեռագիր աշխատանքները, բաժնեցին յատուկ նուէրներ և կատարեցին հիւրասիրութիւն:

BDF ••••			Schwarzkopf PROFESSIONAL		IGORA royal
NIVEA Creme	NIVEA Hair Care	NIVEA for Men	b bonacure	SILHOUETTE	STYLING
NIVEA VITAL	NIVEA VISAGE	NIVEA Beauty	IGORA VARIO BLOND PLUS	IGOFLEUR	Nature's STYLING
NIVEA Shower	NIVEA Soap	NIVEA SUN	Vital STYLING	Clynol hair	Bodycology
NIVEA Soft	NIVEA نيسيا	NIVEA DEODORANT	MATIS	Degussa	VitaTrace Nutrition Ltd
atrix	LIMARA	labello			

SUD S.A.L

AGENT EXCLUSIF. Tel: 09-214507/9/10





# «ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ 25ԱՄԵԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ՀԱԼԷՊԻ ՄԷՉ

## Գեորգ Յակոբճեան ՀԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.ական խօսքի եւ մտքի բեմը հանդիսացող «Մարզիկ» պաշտօնաթերթը վերջին 25 տարիներուն հայ իրականութեան մէջ իր եզակի կնիքը ունի եւ պիտի շարունակէ ունենալ՝ շնորհիւ իր լայնատարած, աշխարհացրիւ ու բազմաշերտ հայ ընթերցողներու զանգուածին: 1980ին, Լիբանանի դժնդակ պայմաններուն մէջ կեանքի կոչուած «Մարզիկ» պաշտօնաթերթը մեր պահանջներուն գոհացում տալու համար չէ որ լոյս տեսաւ, ո՛չ ալ հայ եւ միջազգային մարզաշխարհի ու սկաուտական շարժման քարոզիչն ու լրագրական օրկանը ըլլալու համար, այլ՝ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարապաշտ եւ անձնուրաց նուիրեալներու այն համոզումին հիմամբ, որ «Մարզիկ»ը պիտի դառնայ աշխարհացրիւ Հ.Մ.Ը.Մ.ականները կամրջողն ու շաղկապողը: Նպատակը իրականացած է փաստօրէն:

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբ Ծրջանային Վարչութեան, «Մարզիկ» պաշտօնաթերթի հրատարակութեան 25ամեակի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 10 Դեկտեմբեր 2006ի առաւօտեան ժամը 11.30ին, «Զաւարեան» սրահին մէջ: Բերիոյ Թեմի Հայոց Առաջնորդ՝ Ծահան Եպս. Սարգիսեանի հովանաւորութիւնն ու ներկայութիւնը վայելող հանդիսութեան ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գեորգ Կարապետեան, Ազգային իշխանութեանց մարմիններու, մշակութային, բարեսիրական եւ մարզական միութիւններու ներկայացուցիչներ, հրաւիրեալներ եւ



Պարգևատրեալ եղբայրներն ու քոյրը Բերիոյ Թեմի Հայոց Առաջնորդին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գեորգ Կարապետեանին եւ Սուրբ Ծրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեանին հետ:

### սկաուտ քոյր-եղբայրներ:

Յետ Սուրբոյ եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութեան, ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգեցին յիշատակը Հ.Մ.Ը.Մ.ի նուիրեալներուն: Հանդիսավարներու բարի գալուստի խօսքէն ետք, եղբ. Եղիա Քիլճեան մենեղեց «Ծաղկիր ինձ համար» երգը: Ապա, բեմ բարձրացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբ Ծրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեանը՝ փոխանցելու համար Ծրջանային Վարչութեան խօսքը: Եղբ. Տէր Աբրահամեան իր խօսքին սկիզբը անդրադարձաւ մամուլի ներկայացուցած արժէքին ու կարեւորութեան: Ապա, իր խօսքը շարունակելով ան ըսաւ. «25ամեայ «Մարզիկ»ը դրօշա-

կիր մատեանը դարձաւ 20րդ դարու վերջին երկու տասնամեակներու հայ մարզական եւ սկաուտական յաջողութիւններուն»: Եղբայրը իր խօսքին աւարտին շնորհակարանքի եւ շնորհակալութեան խօսք ուղղեց «Մարզիկ»ի անխափան հրատարակութիւնը ապահովող Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, խմբագիրներուն, թղթակիցներուն, համակիրներուն եւ ընթերցողներուն:

Գեղարուեստական յայտագիրը շարունակուեցաւ քոյր Վաննի Մինասեանի Ֆիլոթով երաժշտական կտորի մը մատուցումով: Յայտագրի հետաքրքրական բաժիններէն մէկը հանդիսացաւ 25 տարիներու ընթացքին «Մարզիկ»ի մէջ լոյս տեսած Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ

տարբեր մասնաճիւղերու գործունէութեանց, թղթակցութիւններու, նկարներու, ծանօթացման քարտերու եւ պատուաբեր նկարներու ցուցադրութեան ծաղկաքաղ: Պաստառի վրայ ցուցադրուած նկարները կը վերաթարմացնէին անցեալի գեղեցիկ ու վառ յիշատակներ:

Անգամ մը եւս ներկաներու հոգիներն ու սրտերը ուրախութեամբ ու պարծանքով տողորուեցան, երբ տեսան Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ մասնաճիւղերու արձանագրած յաղթանակները, կանոնաւոր տողանցքները, պատուաբեր արդիւնքներ ապահովող մարզիկ քոյր-եղբայրները, տարիներ շարունակ իրենց կեանքը Հ.Մ.Ը.Մ.ին եւ անոր գաղափարաբանութեան նուիրած վեթերան ու բազմավաստակ եղբայրները:

Այս բոլորէն ետք, սրահին մէջ կլանւած ջերմ ու զգացական մթնոլորտը իր գազաթնակէտին հասաւ եղբ. Նազօ Փոլատեանի «Մասունցիներու պար»ը բանաստեղծութեան հոյակապ ներկայացումով:

Տեսերիցի վրայ ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատրաստած խտասալիկը, ուր ներկայացուեցաւ «Մարզիկ» պաշտօնաթերթի հրատարակութեան նպատակը, զարգացման հոլովոյթը, աշխատելաճը, հանդիպած դժուարութիւններն ու ապագային հեռանկարները:

Օրուան բանախօսն էր «Մարզիկ»ի տարիներու թղթակից, Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի մասնաճիւղի Սկստակական Խորհուրդի անդամ եղբ. Խաթակ Տիւլէրեան: Բանախօսութեան բնաբանը առնուած էր Պատմահայր Մովսէս Խորենացիի նշանաւոր մէկ խօսքը. «Թեպետ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքրս սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ այլով յոյժ անգամ նուանեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոց յիշատակի»:

Եղբայրը հանգամանօրէն ներկայացուց «Մարզիկ»ի բնոյթը, իբրեւ հայ մա-

մուլի կարեւոր մէկ ներկայացուցիչը, որ թէեւ ըստ էութեան կ'արձագանգէ Հ.Մ.Ը.Մ.ի կատարած աշխատանքներուն, սակայն իր բովանդակութեամբ հայ հանրային կեանքէն ներս բիւրեղացուցած է ընդհանրական մտածողութիւն:

Եղբ. Տիւլէրեան ըսաւ. «Այսպիսով ան չմնաց մարգական իրադարձութիւններ փոխանցող լրատուական միջոց մը միայն, ան պեղեց մեր ընդերքը, լուսարձակի տակ առնելով մեր ազգային կեանքին շատ մը բնագաւառները»: Ապա, «Մարզիկ»ի ծնունդին եւ նկարագրին անդրադառնալով, ան շեշտեց. «Աւելի քան քսանհինգ տարիներ անցած են «Մարզիկ»ի ծնունդէն: Դժուար եղաւ այդ ծնունդը, յար եւ նման իր պատկանած միութեան: Եթէ Հ.Մ.Ը.Մ.ը հայ ժողովուրդի պատմութեան ամենէն արիւնոտ մէկ շրջանին ծնունդ կ'առնէր, «Մարզիկ»ն ալ իր ծննդավայրին մէջ արեան, արհաւիրքի տառապանք ապրած Լիբանանի քաղա-

**Travel Ways - Egypt**

**NILE CROCODILE CRUISES**

*Incoming Tour Operator  
Hotel & Cruise Reservation  
Transportation  
Excursions*

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1  
from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt  
Tel: 02 2739400/500/600  
www.travelways-egypt.com  
marketing@twaysegy.com





Զախին՝ Եղբ. Խաժակ Տիլպերեան բանախօսութեան պահուն: Աջին՝ ատենապետ եղբ. Րաֆֆի Տէր Արրահամեան կը փոխանցէ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Ծրջանային Վարչութեան խօսքը:

քացիական պատերազմի ամենէն դժնդակ օրերուն ծնունդ առաւ»: Եղբայր բանախօսը իր ելոյթին յաջորդ բաժնին մէջ անդրադարձաւ «Մարզիկ»ի ունեցած հայապահպանման առաքելութեան եւ ըսաւ. «Եթէ տարբեր խառնուածքներու, տարբեր կենցաղներու եւ մտածելաձևերու նորահաս սերունդ մը կը զարգանայ այսօր Սփիւռքի մէջ, «Մարզիկ» պաշտօնաթերթը կարողացաւ համախմբել, ներդրել անոնց մէջ ազգային գիտակցութիւն, միութեանական մարդու արժանիքներ, հայօրէն ապրելու եւ գործելու վճռականութիւն, մի՛շտ հաւատքով, մի՛շտ խանդավառութեամբ»: Եղբ. Տիլպերեան իր խօսքը շարունակեց «Մարզիկ»էն մէջբերումներ կատարելով, ապա ան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Բարի երթ սիրելի «Մարզիկ», քալէ՛ հպարտ, խրոխտ, մի՛նչեւ ոսկեծին յիսնամեակ, մի՛նչեւ ադամանդակուտ հարիւրամեակ, նոր մասնակիւղերու, կարօտալի մասնակիւղերու՝ Կարսի, Արտահանի, Կարնոյ, Վանի, Բաղէշի հայատրոփ մասնակիւղերու միացումով: Մենք կը հաւատանք, դո՛ւք ալ հաւատացէք վարդահեղեղ արշալոյսին, որուն ոտնաձայնը մենք կ'առնենք»:

Բանախօսութենէն ետք կրկին բեմ բարձրացաւ եղբ. Եղիա Քիլէճեան եւ

մեներգեց «Սիրոյ Ամառ» երգը: 25ամեակի ոգեկոչման հանդիսութեան աւարտին բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գէորգ Կարապետեան՝ փոխանցելու համար Կեդրոնական Վարչութեան խօսքը: Ան իր խօսքին մէջ շնորհակարարեց ներկաները «Մարզիկ»ի հրատարակութեան 25ամեակին առիթով եւ յարատեւ վերելք ու յաջողութիւն մաղթեց բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

«Մարզիկ» պաշտօնաթերթի 25ամեակի տօնակատարութեանց ծիրէն ներս, Կեդրոնական Վարչութիւնը խորիմաստ գաղափար մը յղացած էր պարգեւատրելու «Մարզիկ»ի մէջ տարիներու ծառայութիւն ունեցող քոյրերն ու եղբայրները: Այս առիթով, տարիներ շարունակ իրենց թղթակցութիւններով ու յօդուածագրութեամբ Սուրիան ներկայացուցած եւ «Մարզիկ»ը հարստացուցած եղբայրներ Խաժակ Տիլպերեան եւ Վիգէն Գապագեան, ինչպէս նաեւ քոյր Մեղրիկ Ապահունի բեմ բարձրացան՝ ստանալու համար Կեդրոնական Վարչութեան պատրաստած յատուկ յուշանուէրները: Պարգեւատրումը կատարուեցաւ Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի ձեռամբ:

Հանդիսութեան աւարտին, իբրեւ գրասէրի, մշակութասէրի, մարզասէ-

րի, թեմակալ Առաջնորդի, իր սրտի խօսքը փոխանցեց Շահան Եպս. Սարգիսեան: Սրբազանը իր նախաբանին մէջ ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ի պատմական երթին մէջ, հայ մամուլի, մարզական աշխարհի եւ մարզական աշխարհին հետ, Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարականը տարածող եւ քարոզող պաշտօնական այս թերթին անդրադառնալու, մանաւանդ մեր օրերու օտարամոլութեան հիւանդութեան դէմ պայքարող այս թերթին համար եկած ենք այսօր»: Սրբազան հայրը իր խօսքը շարունակելով վերջիջեց այն դժուարութիւնները, որոնց կը հանդիպէր «Մարզիկ»ի պաշտօնէութիւնը՝ թերթը հրատարակելու համար: Ան յիշեց նաեւ այն օրերը, երբ ան

իբրեւ դպրեվանեցի «Մարզիկ»ի միջոցով տեղեակ կ'ըլլար հայկական մարզաշխարհի իրադարձութիւններուն: Սրբազան հայրը անդրադարձաւ այն իրողութեան, որ այսօրուան ճարտարունեստականացած աշխարհին մէջ, համացանցին կատարածը «Մարզիկ»ը 25 տարիներ առաջ արդէն յաջողած էր իրագործել: Սրբազան հայրը բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն լրջութեան, հետեւողականութեան եւ գիտակցութեան կոչ ուղղեց ու իր խօսքը շարունակելով ըսաւ. «Մենք պարտաւորութիւնը ունինք վեր առնելու թերթին էջերէն քալող Հ.Մ.Ը.Մ.ականի հոգին, Հ.Մ.Ը.Մ.ականի երթը, Հ.Մ.Ը.Մ.ականի ծառայութիւնը եւ «Մարզիկ»ի ոգին: Ես այս ոգիով է որ կ'ողջունեմ «Մարզիկ»ի քառորդ դարու ծառայութիւնը, անոր պայծառ օրեր կը ցանկամ, անոր միջոցով մեր գաղափարական աշխարհին եւ մեր եղբայրներուն ու քոյրերուն նորանոր նուանումներ ու յաջողութիւն կը մաղթեմ եւ սուրիահայ մեր կեանքին մէջ Հ.Մ.Ը.Մ.ին կը մաղթեմ պայծառ ներկայութիւն, յաղթական՝ ներկայութիւն, ստեղծագործող ներկայութիւն»:

Այնուհետեւ, հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

## Հ.Մ.Ը.Մ.Ի 88ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԵՐԴՈՒՄ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ՝ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ

Մարալ Կէնճոյեան  
ԳԱՄԻՇԼԻ

Հ.Մ.Ը.Մ.Ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութեան եւ Սկառուտ-Խորհուրդին նախաձեռնութեամբ, խմբապետական ու աստիճանաւորական կազմերուն ջանքերով, Շաբաթ, 2 Դեկտեմբեր 2006ի կէսօրէ ետք ժամը 2ին, Հ.Մ.Ը.Մ.Ի սկիւմբի սրահին մէջ տեղի ունեցաւ սկառուտական խրախճանք մը՝ նուիրուած Հ.Մ.Ը.Մ.Ի 88ամեակին, ներկայութեամբ վարչութեան ատենադպրուհիին, խորհուրդի կազմին, խմբապետական եւ աստիճանաւորական կազմերու եւ աւելի քան 125 դայիկ-արժուիկներու եւ արի-արեւոյճներու:

Բացումը կատարուեցաւ «Ով հայ արի» քայլերգով: Ապա, մասնաճիւղին խմբապետը բարի գալուստ մաղթեց բոլորին եւ շնորհակտեց Հ.Մ.Ը.Մ.Ի 88ամեակը:

Երեկոն խանդավառեց «Աղթամար» նուագախումբը իր հայկական ճութի երգերով: Դադարին քոյր Մեղեղի Յովհան-

նէսեան մեներգեց «Հայաստան» երգը:

Ապա, մասնաճիւղի խմբապետ եղբ. Կապի Տիքիճեան հրաւիրեց վարչութեան ատենադպրուհի քոյր Սիլվա Յովհաննէսեանը փոխանցելու իր խօսքը: Քոյրը ողջունեց ներկաները եւ ջերմօրէն շնորհակտեց Հ.Մ.Ը.Մ.Ի 88ամեակը: Ան իր խօսքին մէջ աստիճանաւորութեան անդրադառնալով յայտնեց, որ ան Հ.Մ.Ը.Մ.Ի նշանաբան «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»-ի իրականացման միջոցներէն մէկն է: Խօսքին աւարտին, քոյրը բոլորին մաղթեց աննկուն կամք եւ դէպի լաւագոյնին ձգտելու ոգի:

Այնուհետեւ, քոյրեր Հեղնար Տիգրանեան եւ Հուրի Մարտիրոսեան ջութակով ներկայացուցին «Մեր հայրենիք» քայլերգը:

Այս առիթով մասնաճիւղին խմբապետը հրաւիրեց քոյրեր եւ եղբայրներ՝ կատարելու իրենց սկառուտական խոստումը: Խմբապետին պատուէրով անոնք երգութեան հաւատարիմ մնալ Հ.Մ.Ը.Մ.Ի Ծրագիր-Կանոնագրին եւ խոստացան ծառայել ազգին ու հայրենիքին: Երգութեալ քոյր-եղբայրները ստացան Փոխ Առաջնորդի աստիճան:

Երգման արարողութենէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որմէ ետք խրախճանքը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

**We Can Light Up A City**

**G. AYANIAN & SONS**  
Electricity  
Pumps  
Lighting  
Air Conditioning  
Video Phone

— G. AYANIAN & SONS —  
BEIRUT

**Dora: 01-255 222/3/4/5/6 Gemmayze: 01-447 000 - 447 940 Mobile: 03-627 728/9**  
**Fax: 01-265 187 - 582 357 E-mail: gasons@dm.net.lb www.ayanian.com**





# ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ՎԵՐԱՈՐԱԿԱՒՈՐՄԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

## Թղթակից ՊՈՍԹԸՆ

**Հ**ՄԸՄ-ի Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանի սկաուտական շարքերու դաստիարակչական եւ կազմակերպչական աշխատանքին լծուած խմբապետները վերաորակաւորելու համար, Շրջանային Սկաուտ-Խորհուրդը կազմակերպեց խմբապետական երկօրեայ սեմինար մը, Պոսթընի Հայ Մշակութային Կեդրոնին եւ ՀՄԸՄ-ի ակումբին մէջ: Սեմինարին իրենց մասնակցութիւնը բերին Արեւելեան շրջանի չորս մասնաճիւղերէն Ա. կարգի վկայեալ 22 աստիճանաւոր քոյրեր եւ եղբայրներ: Այսպէս, Շիքակոյէն 4, Ուաշինկթընէն 5, Պոսթընէն 8 եւ Ֆիլատելֆիայէն 5 քոյրեր եւ եղբայրներ, Ուրբաթ, 26 Յունուար 2007ի ուշ երեկոյեան հաւաքւեցան Պոսթընի Հայ Մշակութային Կեդրոնին մէջ, յաջորդ օրը կանուխէն սեմինարի աշխատանքներուն պատրաստ ըլլալու համար:

Սեմինարը, որ ունեցաւ յաջող ըն-

թացք եւ դաստիարակչական օգտաշատ յայտագիր, պաշտօնապէս սկսաւ Շաբաթ, 27 Յունուար 2007ի առաւօտեան ժամը 8.30ին, դրօշակի արարողութեամբ: Բացման խօսքով Շրջանային Սկաուտ-Խորհուրդի ատենապետ եղբ. Զարեհ Գարակիլլէեան ողջունեց ներկաները եւ անդրադարձաւ սեմինարին ընթացքին, կարեւորութեամբ շեշտելով անոր անհրաժեշտութիւնը՝ սկաուտական կեանքէն ներս:

Երկօրեայ սեմինարին յայտագիրը ընդգրկեց 8 դասախօսութիւններ, շարքային աշխատանք, երգի ուսուցում, մարզանք եւ տեսաերիզի ցուցադրութիւն: Ներկայացուցեցան հետեւեալ նիւթերը:-

- «Սկաուտական կանոնագրէն» - Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վահէ Թանաշեան.
- «Բանակումի նախապատրաստական աշխատանքներ եւ ծրագրում» - Շրջանային Սկաուտ-Խորհուրդի անդամ քոյր Հեղին Մարկոսեան.
- «Խարուկահանդէս» - Շրջանային Սկաուտ-Խորհուրդի անդամ եղբ. Զարեհ Գարակիլլէեան.
- «Կազմակերպական վարուելա-

- կերպ» - Մարտ Սինասեան.
- «ՀՄԸՄ-ի Գաղափարաբանութիւնը» - եղբ. Կարո Մեղքոնեան.
- «Խմբապետին դերը, յատկանիշները եւ պարտաւորութիւնները» - եղբ. Վահէ Թանաշեան.
- «Սկաուտական դաստիարակութեան նիւթերը» - եղբ. Վահէ Թանաշեան.
- «Սկաուտական գործունեութեան յայտագիր պատրաստելու ձևերը» - եղբ. Զարեհ Գարակիլլէեան.
- «Քայլերգի երգեցողութեան նիշդ ձևերը» - Շրջանային Սկաուտ-Խորհուրդի անդամ եղբ. Գէորգ Թաթարեան.
- «Շարքային աշխատանք եւ կարգապահական վարժութիւն» - եղբ. Սարգիս Ստեփանեան.
- Վերոյիշեալ նիւթերը փոխանցուեցան փորձարկումի, զրոյցի եւ քննարկումի ձևերով:
- Սեմինարին յաջողութեան նպաստեցին Պոսթընի մասնաճիւղի Սկաուտ-Խորհուրդի անդամները, որոնք յօժարութեամբ եւ խանդավառութեամբ ապահովեցին սեմինարին մասնակցողներուն ճաշերը եւ հանգստութեան պայմանները:

Սեմինարին յայտագրի աւարտին, տեղի ունեցաւ պաշտօնական փակում: Փակման հանդիսութեան խօսք առին Շրջանային Սկսուտ-Խորհուրդի ատենապետ եղբ. Զարեհ Գարակիւլլէեան, հիւրընկալ մասնաձեռնի վարչութեան փոխ ատենապետ եղբ. Միսաք Ուրֆալեան եւ Շրջանային Վարչութեան անդամ եղբ.



Վահէ Թանաշեան: Խօսք առնողները շնորհակալութիւն յայտնեցին հիւրընկալ մասնաձեռնի վարչութեան եւ Սկսուտ-Խորհուրդին, բարձր գնահատեցին սեմինարին մասնակցող քոյր-եղբայրներուն աջակուրջ ընթացքը եւ շեշ-

տեցին, թէ նման սեմինարներ պարզապէս առիթներ են, ուր պատասխանատու մարմինները կը փորձեն կարելի եղած չափով փոխանցել պատշաճ գիտելիքներ, որոնց ընկալումը եւ գործադրութիւնը կը մնայ մասնակցող քոյր-եղ-

բայրներուն հիմնական պարտաւորութիւնը: Հետեւաբար, սեմինարին աւարտին, մասնակցող քոյր-եղբայրներուն կը մնայ սրբաւած գիտելիքներուն ամրապնդումը՝ ինքնաշխատութեամբ, ապա առնուած գիտելիքն երուն

ճշգրիտ գործադրութիւնը սկսուտական աշխատանքներու ընթացքին:

Պաշտօնական խօսքերէն ետք, սեմինարը փակուեցաւ Կիրակի, 28 Յունւար 2007ի յետմիջօրէի ժամը 2ին, դրօշակի արարողութեամբ:

With the compliments of

Restaurant Al-Mayass





# «Հ.Մ.Ը.Մ.Ի ՕՐ»ՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՒՆ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՉ

Չարեհ Տէրվիշեան  
ԹՈՐՈՆԹՈ

Հաւատարիմ իր աւանդութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի վարչութիւնը այս տարի եւս կազմակերպեց «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»-ը՝ սոնակատարութիւն, Կիրակի, 11 Փետրուար 2007ի կէսօրէ ետք ժամը 2ին, Թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ՝ 350 Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու:

Պաշտօնական հանդիսութենէն առաջ, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ ննջեցեալ Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին:

Հոգեհանգստեան արարողութեան ներկայ էին սկառտական կազմերը, որոնք բոլորն ալ հաղորդուեցան եւ ապա՝ սկառտական յատուկ արարողութեամբ, ծաղկեպսակ մը զետեղեցին Հայ Կեդրոնի շրջափակին մէջ գտնուող Ապրիլեան Եղեռնի յուշարձանին:

Տօնակատարութիւնը սկսաւ 250 ըսկառտներու եւ մարզիկներու տողանցքով, առաջնորդութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին:

Օրուան հանդիսավարներ քոյր Անի Կարապետեան եւ եղբ. Շանթ Հալլաճեան փոխին ի փոխ վարեցին օրուան յայտագիրը:

Դրօշակի արարողութենէն եւ Գանատայի ու Հայաստանի քայքայներէն ետք, եղբ. Շանթ Հալլաճեան ներկայները հրաւիրեց յոտնկայս յարգելու յիշատակը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքէն յաւատարմութեամբ քոյր-եղբայրներու, ինչպէս նաեւ Յեղասպանութեան վերջին զոհ՝ Հրանդ Տինքի:

Հանդիսութիւնը իրենց ներկայութեամբ կը պատուէին Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ Արմէն Կէտիկեան եւ Վահան Զալիքեան, Հ.Յ.Դ. «Ս. Թեօփրեան» կոմիտէի եւ քոյր միութիւններու վարչութեանց ներկայացուցիչներ եւ հիւրեր:

Սկառտները ձեռնարկին բնաբան որոշած էին «բանակում»ը եւ առ այդ՝ բեմը զարդարած էին բանակումը յատկանշող տեսարաններով: Քոյր Անի Կարապետեանի հրաւերով, անոնք կենդանի պատկերներով ներկայացուցին սկառտական բանակումի կեանքէն դրուագներ:

Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի մարտարուեստի խումբը այս տարի կը հաշուէ 110 անդամներ: Խումբը մը այդ մարզիկներէն կատարեց մարտարուեստի ցուցադրութիւն մը, ինչ որ մեծ հետաքրքրութեամբ ընկալուեցաւ ներկայներուն կողմէ:

Մասնաճիւղին խօսքը փոխանցեց վարչութեան ատենա-



պետ եղբ. Ժանօ Սարխանեան, շեշտելով որ 1969ին հիմնուած Թորոնթոյի մասնաճիւղը այսօր կը հաշուէ 220 սկառտներ, Փոլիսպոլի, պասքեթպոլի եւ վոլեյպոլի 17 խումբեր, փինկ-փոնկի, աթլետիկ, ճատրակի եւ մարտարուեստի խումբերու կողքին: Եղբ. Սարխանեան իր խօսքին աւարտին բեմ հրաւիրեց մասնաճիւղին առաջին վարչութեան անդամները՝ քոյր Բեննա Թարգի, եղբայրներ Հայկ Ճըլտրեան, Յակոբ Աթիկեան, Ատրուշան Պոյաճեան, Գրիգոր Շիթիկեան, Գրիգոր Մալեգեան, Աբիկ Սվաճեան եւ Մկրտիչ Փափազեան: Այս առիթով, վարչութիւնը յատուկ գնահատագիրներով պատուեց մասնաճիւղի անդամներէն քոյրեր Հուրի Նաճարեանը, Սոնա Ֆարրան, Անի Հոթոյեան-Ժոլին, Սելինա Փօլ Փիթըրը, Սեւան Տէմիրճեանը, Գարօլ Գալաճեանը եւ եղբայրներ Գէորգ Սարխանեանը, Արմիկ Հացագործեանը, Գէորգ Ալաճաճեանը, Յովիկ Թելեանը եւ Արթօ Խաչերեանը, Հ.Մ.Ը.Մ.ի ունեցած իրենց տարիներու զոհաբերութեան եւ անսակարկ նուիրումին համար: Անոնց գնահատագիրները յանձնեցին առաջին վարչութեան անդամները, որոնք իրենց կարգին վարչութեան կողմէ պատուուցան յատուկ յուշանուէրներով:

Այս առիթով, մասնաճիւղին վարչութիւնը գնահատագիրով մը պատուեց շեփորախումբը, ընթացիկ տարուան ընթացքին Հայ Կեդրոնին մէջ իր ունեցած գնահատելի դործունէութեան համար: Տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի գնահատագիրին եւ պատիւին արժանացաւ Եղբ. Վահագ Եղոյեան՝ իր ջանասիրութեան, պարտաճանաչութեան, ան-



սակարկ նուիրումին եւ Հ.Մ.Ը.Մ.ակա-  
նի օրինակելի վարքին համար:

Հանդիսութեան ընթացքին, սկառ-  
տական յատուկ արարողութեամբ, քոյ-  
րեր Սեդա Պոյաճեան, Սարին Քէօսէ-  
եան, Սարին Մեյլիտոնեան, Գառնի Գա-  
սապեան, Թամար Տէմիրճի, Մարիա  
Վարդանեան, եղբայրներ Խաթակ Աւագ-  
եան եւ Արա Պոյաճեան ստացան օգնա-  
կան խմբապետի աստիճան, իսկ փոխ  
խմբապետի աստիճան ստացան քոյրեր  
Նորա Սարգիսեան եւ Շարիս Շահմիր-  
եան՝ ձեռամբ մասնաճիւղի խմբապետ-  
ներ քոյր Յասմիր Շահինեանի եւ եղբ-  
Սարօ Ֆարրայի:

Մէջընդմէջ սկառտական կանչերն  
ու ծափերը յաւելեալ փայլք մը տուին  
ձեռնարկին:

Յուցագորուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի երէցնե-  
րու փաղանգէն եղբ. Խաթակ Աւագեանի  
պատրաստած տեսաերիզը՝ ցոլացնելով  
մասնաճիւղին մարզական եւ սկառտա-  
կան կեանքն ու գործունէութիւնը,  
Մոնթրէալի մարզական խաղերու թէ

համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումի ընդ-  
մէջէն: Ներկաները դիտեցին նաեւ  
«Մարզիկ» պաշտօնաթերթին պատրաս-  
տած տեսաերիզէն մաս մը:

Հուսկ, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջա-  
նային Վարչութեան խօսքը փոխանցեց  
Շրջանային Վարչութեան անդամ եղբ-  
Վահան Չալիքեան: Ան յատկապէս անդ-  
րադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի մաս-  
նաճիւղերու գործունէութեան եւ ի  
մասնաւորի՝ Թորոնթոյի մասնաճիւղի  
աշխատանքներուն, նշելով որ Գանա-  
տայի շրջանէն համա-Հ.Մ.Ը.Մ.ական  
բանակումին մասնակցած 102 սկառտ-  
ներէն 47ը Թորոնթոյէն եղած են:

Եղբ. Չալիքեան բեմ հրաւիրեց  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան  
անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեանն ու  
Շրջանային Վարչութեան անդամ եղբ-  
Արմէն Կէտիկեանը, որպէսզի միասնա-  
բար «Մառայութեան» շքանշանով  
պատուեն մասնաճիւղի անդամներէն  
քոյրեր Թագուհի Լուսարարեանը, Ռու-  
բինա Պարոնեանը եւ եղբայրներ Գէորգ

Անտիբեանը, Արմէն Գասապեանը, Ժիլ-  
պէր Թարգին եւ Գառնիկ Նազարէթեանը:


Պարգեւատրումէն ետք խօսք առնե-  
լով՝ Կեդրոնական Վարչութեան անդամ  
եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան շեշտեց 99  
մասնաճիւղերով Հ.Մ.Ը.Մ.ի տարած  
հայանուէր գործունէութիւնը Սփիւռքի  
թէ Հայաստանի մէջ: Ապա, ան անդրա-  
դարձաւ «Մարզիկ» պաշտօնաթերթին  
ու անոր առաքելութեան, ներկաները  
քաջալերելով բաժանորդագրուելու  
կամ քաջալեր անդամ դառնալու անոր:  
Հուսկ, ան «Մարզիկ»ի 25ամեակի յու-  
շանուէրներով պատուեց Թորոնթոյի  
աշխատակիցներէն եղբայրներ Գրիգոր  
Հոթոյեանը եւ Ջարեհ Տէրվիշեանը:

Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեանի «Պահ-  
պանի»ով եւ շեփորախումբի «Յառաջ  
նահատակ» քայլերգով տօնակատարու-  
թիւնը հասաւ իր աւարտին, որմէ ետք  
ներկաները հիւրասիրուեցան, իսկ վոլի-  
պոլի երկսեռ մարզիկները կատարեցին  
մրցում մը:

*'Made from one single slice  
of natural Australian opal'*

# Classique

**OPAL DIAL WATCH**



*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.*  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia

Phone: +61 2 9290 2199  
fax: +61 2 9262 1630  
Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)





# Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ 30ԱՄԵԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Մելան Նապարեան  
ՓԱՐԻՉ



Տարեկան պարահանդես, իսկ այս տարի՝ 30ամեակի պարահանդես:

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսը 2007 տարեշրջանի իր բոլոր ձեռնարկները պիտի նուիրէ մասնաճիւղի հիմնադրութեան 30ամեակին: Ամեակ, որուն յետադարձ հայեացքը ինքնին

կազմակերպիչներուն համար յիշատակներու ծրարը կը քակէ ու նայուածքներուն մէջ խորութիւն մը կը ստեղծէ՝ կրկին այդ սկիզբը բռնելու, շօշափելու, անհաւատալին իրականութեան վերածուած ըլլալը հաստատելու եւ անվերադարձ մեկնողները ոգեկոչելու մեկնակէտով:

Շարքին առաջինը՝ տարեկան պարահանդէսը տեղի ունեցաւ Շաբաթ, 13 Յունուար 2007ին, «Մերիտիան» պանդոկի «Լը Ռենուար» շքեղ սրահին մէջ: Աւելի քան 430 անձեր ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի պարահանդէսին, որ տարիներէ ի վեր միշտ ալ իր համակիրներուն համակրանքը վայելած է:



Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ատենապետ եղբ. Հրաչ Սիսեռեան կ'ողջունէ պարահանդէսին ներկայացողները:

Նախքան պարահանդէսը, աւելի քան մէկ ժամ, ներկաները քոքփէյլի սրահէն ներս մտերմիկ զրոյց ունեցան: Այնուհետեւ, անոնք հրաւիրուեցան պարանցիկ սրահը, ուր դիմաւորուեցան ջութակահար Վարազդատ Խաչումեանի կողմէ: Շուրջ կէս ժամուան ընթացքին, հայկական եղանակներով, ընթրիքի սեղաններուն շուրջ ան ստեղծեց հաճելի մթնոլորտ:

Միութիւնը քաջաբերող եւ իրենց գորակցութիւնը յայտնող ներկաներուն եղբ. Հրաչ Սիսեռեան, վարչութեան ատենապետը, վարչութեան անունով բարի գալուստի խօսք ուղղեց: Ապա, ան կատարեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի հիմնադրութեան կարճ պատմականը, սկսելով հիմնադիր հաւատաւոր եղբայրներու բերած նպաստէն՝ հասնելով մինչեւ մեր օրերը, ընդգծելով որ այս ընթացքին միութեան շարքերէն անցած են աւելի քան 1000 մարդիկ, սկառուարծուիկներ եւ միութենականներ, որոնք թրծուած են Հ.Մ.Ը.Մ.-ի ոգիով: Եղբ. Սիսեռեան մասնանշեց, որ թէեւ որոշ խոչընդոտներ կը ստեղծուին յաճախ, սակայն ժողովուրդին աջակցութիւնն ու գործին հաւատքը կը հարթեն բոլոր դժուարութիւնները: Եղբայրը շեշտեց Հ.Մ.Ը.Մ.-ի էական նպատակակէտը՝

հայապահպանումը եւ աւելցուց, թէ հպարտութեամբ կրնանք ըսել, որ թէեւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսը փոքր է թիւով, սակայն որակով հայ է ու այդ ոգին է որ կը փոխանցէ երիտասարդութեան:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Լեոն Պաղտասարեան ելոյթ ունեցաւ: Իր շնորհաւորական խօսքէն ետք ան աւետեց այն լուրը, ըստ որուն՝ Մարտի «Հ.Մ.Ը.Մ.-Արծիւ»ը, որ 82 տարեկան անցեալ ունի եւ աւելի քան 400 մար-

գիկներ, կը միանայ Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական մեծ ընտանիքին, անոր մասնաճիւղերուն թիւը բարձրացնելով 99ի:

Պարեղանակներու, երգերու եւ գանոնք մեկնաբանողներու ցանկը այլազան էր այդ երեկոյ: Հայկական երգերով ելոյթ ունեցան Սուրէն եւ Աւօ: Իսկ երեկոյին մեծագոյն բաժինը խանդավառեց Հալէպէն հրաւիրուած «Կոմիտաս» նուագախումբը, որուն երգիչը՝ Յովսէփ իր հայկական, արաբական թէ՛ այլ երգացանկով ներկաներուն պարզեւեց հաճելի ժամեր:

Վիճակահանութիւն, նուէրներ, նուիրատուութիւններ, 30ամեակի կարկանդակ, պար ու երգեր երեկոն դարձուցին տաք ու հաճելի:

Մինչեւ առաւօտեան ժամերը սրահը տակաւին չէր պարպուած:

30ամեակը բացուած է պարելով ու երգելով: Պիտի յաջորդեն միւսերն ալ...:

## ԵՂԲ. ԱՍՏԻԿ ՍԱՐԳԻՍ ԵԱՂՃԵԱՆ ՈՉ ԵՒՍ Է



Հ.Մ.Ը.Մ.ի Սոֆիայի մասնաճիւղ ՍՈՖԻԱ

**22** Դեկտեմբեր 2006ին, յետ կարճատեւ հիւանդութեան, Սոֆիայի մէջ իր մահականացուն կնքեց Հ.Մ.Ը.Մ.ի Սոֆիայի մասնաճիւղի երկարամեայ ատենադպիր՝ եղբ. Աստիկ Սարգիս Եաղճեանը:

Եղբ. Աստիկ ծնած էր Փրովտիվ, 23 Սեպտեմբեր 1921ին: Ան նախնական կրթութիւնը ստացած է քաղաքի Մխիթարեան վարժարանը, ապա աւարտած է կահոյքի տեղւոյն մասնագիտական միջնակարգ դպրոցը: 85ամեայ իր կեանքը ան նուիրած է ազգանուէր ծառայութեան: Վարած է պատասխանատու պաշտօններ:

Եղբայր Աստիկ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ առաջին սերունդի վերջին ներկայացուցիչներէն էր: Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցած է 1930ական տարիներու սկիզբը, իբրեւ գայլիկ եւ սկառտ: 1991ին, Սոֆիայի մասնաճիւղին վերականգնումէն ետք, ան ընտրուած է տեղւոյն վարչութեան ատենադպիր. պաշտօն մը զոր ան վարած է մինչեւ 2002ի Նոյեմբերը:

Եղբ. Աստիկ տասնեակ տարիներ մասնակցած է Սոֆիայի «Երեւան» երգչախումբին: Գործօն անդամ էր տեղւոյն Հայ Դատի ակումբին: Իր մահով ան կը ձգէ պատուական մարդու, հայրենասէր հայու եւ նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ականի անմոռանալի անուն:




# Philippe Photo Trade

- Audio / Video Production / Post Production Systems
- Liner / Non-Liner Editing Systems
- Data / Video Large Screen Projection Systems
- Audio / Video Systems for Professional Application
- Conferencing / Simultaneous Translation Systems
- Language Labs & Conventional Training Aids Systems

**EXPERTS IN AUDIO-VISUAL SYSTEMS INTEGRATION AND TOTAL CONTROL APPLICATION**

Head Office: 1(a) Mesaha St., Orman Sq., Dokki, Zip Code: 12311 A.R. Egypt.  
Tel: 7491350 (8Lines) Fax: 7481069 E-mail: philippe@ritsec2.com.eg

Alex. Branch: 33 Sidi El-Metwally St., El-Attarin / Alexandria  
Tel: (03)4916017 Fax: (03)4923051 E-mail: philippe@ritsec2.com.eg



*Assadourian Bros.*



ՀԵԹԻԱԹ

# ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՁԻՆ

Պատրաստեց՝ Սալբի Լատոյեան  
ՊԷՅՐՈՒԹ

**Ձ**ին ըսաւ. «գիտէի որ այսպէս պիտի ըլլար, ցատկէ՛ կռնակս»: Ու ձին թռաւ, հասաւ լեռան մը գագաթը: Տղան իջաւ ձիէն: Ձին հետեւեալ պատուէրը տուաւ. «քալէ՛ այս տեղէն մինչեւ հասնիս աղբիւր մը, ուրկէ պղտոր ջուր կը հոսի: Քիչ մը խմէ եւ ըսէ՝ ի՞նչ համով է»:

«Շարունակէ ճամբադ, կը հասնիս ցեխոտ դաշտ մը, անցիր ցեխին մէջէն եւ ըսէ՝ ի՞նչ գեղեցիկ դաշտ է: Դաշտին կեդրոնը կայ եօթը դռներով պալատ մը, մտիր ներս, բարձրացիր սանդուղիներէն, պիտի հասնիս քնացող եօթը հսկաներու, զգո՛յճ անցիր անոնց քովէն, առանց անոնց դպչելու: Վերջապէս կը տեսնես սենեակ մը, ուր աղջիկ մը քնացած է: Մօտեցիր աղջկան, դիր ուսիդ եւ նոյն ճամբանով վերադարձիր քովս»:

Տղան այս պատուէրները կէտ առ կէտ գործադրեց եւ աղջիկը ուսին՝ հասաւ ձիուն մօտ:

Թագաւորը երբ տեսաւ աղջիկը, հիացաւ. ուզեց հետը ամուսնանալ:



խնձորենի մը կայ, եթէ այդ խնձորին ջուրով լոգնաս, երիտասարդ ու գեղեցիկ կը դառնաս», ըսաւ աղջիկը:

«Ի՞նչպէս կրնամ այդ խնձորէն ունենալ», հարցուց Թագաւորը:

«Անկասկած, զիս բերողը կրնայ խնձորն ալ բերել», ըսաւ աղջիկը:

Դարձեալ տղան կանչուեցաւ ու թագաւորը հրամայեց, որ խնձորը բերէ:

Տղան պատմեց ձիուն: Խելացի ձին ըսաւ. «պիտի տանիմ քեզ երկու լեռներու միջեւ գտնուող տեղ մը, ուր ոչ ոք կրնայ հասնիլ: Սակայն օրուան որոշ ժամերուն այդ լեռները իրարմէ կը հեռանան եւ քարէ պատ մը կը բացուի: Շատ արագ պէտք է անցնիլ: Պատին միւս կողմը պարտէզն է»:

Երբ ձին երիտասարդը հասցուց աղջկան պարտէզին մօտ, ըսաւ.

«Ահա՛ փնտռած պարտէզդ, մտի՛ր, 3 խնձոր քաղէ, սակայն խնձորները պէտք չէ իրարու քսուիլ: Զգո՛յճ, խնձորենիին

ձիւղերուն չդպչիս: Հակառակ պարագային բոլոր հսկաները կը յարձակին մեր վրայ»:

Երիտասարդը ձիուն պատուէրը կրկին գործադրեց, քաղեց խնձորները եւ բերաւ Թագաւորին:

Յաջորդ առաւօտ կանուխ ձին արթնցուց տղուն ու ըսաւ. «գնա՛ աղբիւրին մօտ եւ թագաւորէն առաջ մտիր աղբիւրը»:

Տղան վազեց աղբիւր, նետուեցաւ ջուրը եւ պահուրտեցաւ:

Թագաւորը երբ ջուր մտաւ լոգնալու, արդէն ուշ էր, փոխանակ երիտասարդանալու, յանկարծ անհետացաւ: Տղան հագաւ Թագաւորին հագուստները եւ վերադարձաւ պալատ: Ամէն մարդ կարծեց, թէ Թագաւորն է: Աղջիկը հասկեցաւ, որ իր հետ ամուսնացողը քաջ երիտասարդն է:

Եօթը օր եօթը գիշեր հարսանիք ըրին: (Շար. 2 եւ վերջ)

ձիւղերուն չդպչիս: Հակառակ պարագային բոլոր հսկաները կը յարձակին մեր վրայ»:

Տղան այս պատուէրները կէտ առ կէտ գործադրեց եւ աղջիկը ուսին՝ հասաւ ձիուն մօտ:

Թագաւորը երբ տեսաւ աղջիկը, հիացաւ. ուզեց հետը ամուսնանալ:

«Կ՛ամուսնանամ, եթէ երիտասարդանաս», ըսաւ աղջիկը:

«Ի՞նչպէս կարելի է», ըսաւ Թագաւորը:

«Պարտէզին մէջ կա խարդական



# ԺԱՄԱՆՅ

**Յ** ո վ հ ա ն ն է ս  
Թ ու մ ա ն ե ա-  
ն ի ո՞ր հե-  
ք ի ա թ ն եր ը ն եր կ ա յ ա ց-  
լ ա ծ ե ն հ ե տ եւ ե ալ  
ն կ ար ն եր ու ն մ է ջ .-

«Չախչախ թագաւորը», «Ծիտը», «Ոսկի կարասը», «Կաթիլ մը մեղր», «Կիկոսի մահը», «Քաջ Նազարը», «Տէրն ու ծառան», «Շունն ու կատուն»:

Պ ա տ ա ս խ ա ն ն եր ը տ ե ս ն ել է ջ 40:



## Ի՞ՆՉ ԿԸ ՓԱՓԱՔԻՄ ԸԼԼԱԼ ԱՊԱԳԱՅԻՆ

# ՀՈԳԵԲԱՆ



ը ա գ իր ը ե լ ու ծ ու մ ն եր կ ը գ տ ն է ա ն որ հ ար ց եր ու ն : Հ ար ց եր ը կ ը ն ա ն ը լ լ ալ ը ն կ ե-ր ա յ ի ն , ը ն տ ա ն ե կ ա ն , հ ո գ ե կ ա ն , ա շ խ ա-տ ա ն ք ա յ ի ն եւ ա յ լ ն : Հ ո գ եր ա ն մ ը կ ը ն ա յ ու ն ե ն ալ իր ա ն ձ ն ա կ ա ն դ ար մ ա ն ա տ ու-ն ը կ ա մ կ ' ա շ խ ա տ ի դ պր ո ղ ն եր ու , հ իւ ա ն-դ ա ն ո ղ ն եր ու եւ հ ա ս տ ա տ ու թ իւ ն ն եր ու մ է ջ :

**Հ** ո գ եր ա ն ը մ ար դ ու ն բ ար ե-կ ա մ ն է : Ա ն որ կ ' ը ն կ եր ա կ ց ի կ ե ա ն ք ի բ ո լ որ հ ա ն գ ը ու ա ն-ն եր ու ն , մ ա ն կ ու լ թ ե ն է ն մ ի ն չ եւ ծ եր ու-թ իւ ն :

Հ ո գ եր ա ն ը իր ա շ խ ա տ ա ն ք ը կ ը ն ա յ կ ա տ ար ել ա ն հ ա տ ի մ ը կ ա մ խ ու մ բ եր ու հ ետ :

Հ ո գ եր ա ն ը կ ը դ ի տ է մ ար դ ու ն վ ար-ւ եր ա կ եր պ ը , մ ա ի կ կ ' ը ն է զ ա յ ն , հ ար-ց ա խ ո յ գ եր ո վ կ ը վ եր լ ու ծ է ա ն որ ն կ ա-



## ՀԱՆՇԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:  
Ո՞ր ծառը չի ծաղկիր,  
բայց ամէն տարի պը-  
տուղ կու տայ:

(Պատասխանը՝ յաջորդիւ:  
Նախորդ հանելուկին  
պատասխանն էր թակարդ):





Տարբեր չափեացրով



Էլի Հուլիշեան

**«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ**

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, երկու տարիէ ի վեր հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրուիթիւնը: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ: «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Ազատուիի Դանիէլեան, Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուիի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Զարեհ Գարակիւլիեան, Յակոբ Թոքաթլեան, Վալգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էհրամճեան, Արթո Մարգարեան, Անահիտ Մարգարեան, Տիգրան Հաճէթեան, Լեւոն Մելքոնեան, Հրանդ Տէտէեան, Արթին Մաժակեան, Արա Իմամէճեան, Պետրոս Պաքրրճեան, Բարգէն Կարապետեան, Լեւոն Նաճարեան եւ Կարապետ Ն. Թոփճեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ձորճ Տաթևեան:

**«ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ» ԲԱԺԻՆԻ ԺԱՄԱՆՑԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ**


1. «Ոսկի կարասը», 2. «Շունն ու կատուն», 3. «Ծիտը», 4. «Կաթիլ մը մեղր»:

www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org  
 www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org  
 www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org  
**www.homenetmen.org**  
 www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org

### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- 2006ի Հայաստանի լավագույն ֆուլթայոլիստը:
- Օրինաւոր - Դրկից գիրեր - Հռոմէական դիցաբանութեան մէջ լուսնի եւ ամիսներու աստուածուհին:
- Հնակարկատ - Տարածքի միաւոր:
- Յարաբերական դերանուն - Չայնանիչ - Մշակւած հող:
- Մարմար - Գրաբար՝ հո՛ս - Բարակ բարակ հոսի:
- Բերդ, ապահով պատասպարան:
- Ցուցական ածական - Մեղմ հով - Հայ տղայ:
- Անհատ - Սպանացի թեմիսմէն՝ Ռաֆայէլ - Կայթ:
- Ռուսերէն՝ այո՛ - Արեւելեան Եփրատ:
- Գրաբար՝ ո՛ւր - Երկար սրունքներով հաւազգի - Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գաւառներէն:
- Արեւմտեան հարստութեան հիմնադիրը - Սանասարի եւ Պաղտասարի մայրը:
- Խանդաղատանք - Երկբարբառ մը - Բագմիլ:
- Թեւի տակ:
- Շնագայլ - Իգական օտար անուն:
- «Ֆորմիլա 1»ի իտալացի մրցավարորդ:
- Ցուցական ածական - Սեղանաբեկ, ընչակորոյս:
- Նորէն - Աւնչութիւն - Այբուբենէն - Լծորդութիւն:
- Բալուէ, խանձարուր - Շրջուած՝ գերան:
- Բրինձ - Պարտիզանի կտրոց - Սանասարի ձայնեղ որդին:
- Իրերայաջորդ տառեր - Անհաւատ - Հոգածութիւն:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ

- Ժխտական մասնիկ - Մուկերու թակարդ - Նմանապէս - Մետաքսէ նուրբ հիւսուածք:
- Չուարթ - Եւփիմէ Աւետիսեանի գրչանունը - Այբուբենէն - Երկայնքի միաւոր:
- Ձիաքուռակ - Անգլիացի ֆուլթայոլիստ:
- Հայկական խազ մը - Կրկնուած բաղաձայններ - Սիրան Չարիֆեանի գրչանունը:
- Ջրային փոխադրամիջոց - Թրքահայ երկէզու շաքաթաթերթ:
- Սուր ահուայ - Հոգեգաւակ - Մեծ սափոր:
- Բարակնալ, ցանցառանալ - Գէր - Թատերական հանգրուան:
- Հայկական կուսակցութիւն - Նախրապան - Ընդդէմ մը - Չայնանիչ:
- Դրոշմ - Պաղառութիւն - Երկրաչափական մարմին:
- Չաչ, տնկելի ճիւղ - Չաղացպան:
- Կրկնուած բաղաձայններ - Իտալաբնակ ցեղ - Եւրոպական թագաւորութիւն (հակ.):
- Չորցուած սնամէջ զգում - Նորվեկիացի բեւեռախոյզ՝ Ֆրիտոֆ - Արժեթուղթի սակաբաժին:
- Շաղկապ - Ժամանակի միաւոր - Ներսէս Շնորհալիի հայրը - Եղանակաւորիչ մակբայ:
- Դաշտային Կիլիկիոյ բերդաքաղաքներէն - Հայ ազատագրական պայքարի ռահվիրան - Իսլամ կրօնաւոր:
- Տապալի - Որաներու շեղձ - Մեր թուարկութեանէն առաջ:

### ԹԻՒ 160 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒՇՈՒՄԸ





**«ՄԱՐԶԻԿ»Ի 25 ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՄԻՏՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՄԲ**



**«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ ԿԱՐԴԱԼ**

**ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԻՐ**

Գնահատանքի եւ երախտագիտութեան ջերմ պգացումներով կը շնորհատրենք «Ազդակ»ի 80ամեակը, անոր մաղթելով տեւական յաջողութիւն:

«Ազդակ» հայ պարբերական մամուլի պատմութեան մէջ իր պատուաբեր կնիքը դրոշմած եզակի հրատարակութիւն մըն է, որ հակառակ իր 80 տարիներուն՝ կը մնայ միշտ երիտասարդ ու նորարար: Իր մարզական յաւելումներով թէ ամէնօրեայ մարզական էջերով «Ազդակ» հարապատ արձագանգը կը հանդիսանայ հայ երիտասարդութեան եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ական նորահաս սերունդներու պզգային երթին ու նուաճումներուն:

Շնորհիւ իր խմբագիրներու եւ աշխատակիցներու հաւատարմութեան խօսքին, նուիրեալ գործին ու գրչին, «Ազդակ» գաղափարական դպրոց, մտքի դարբնոց եւ հայապահպան արժէքներու հնոց մը կը հանդիսանայ ընդհանրական մեր իտէլայներու հետապնդման ճամբուն վրայ:

Անսպառ ուժ, կորով եւ յարատեւութիւն «Ազդակ»ի հրատարակութիւնը ապահովող պատասխանատուներուն:

Յարգա՛նք «Ազդակ»ի հրատարակութեան նախաձեռնող, պայն իրականացնող եւ շարունակականութիւնը ապահովող յաջորդական տնօրէններուն, խմբագիրներուն եւ թղթակիցներուն:

Պատի՛ւ «Ազդակ»ը պահող ընթերցող լայն հանրութեան:

21 Մարտ 2007

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
«ՄԱՐԶԻԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

**«ՄԱՐԶԻԿ»Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐՈՒ Բ. ՀԱՏՈՐԸ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ**

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կը տեսնէ «Մարզիկ»ի խմբագրականներու Բ. հատորը, որ իբրեւ Ա. հատորի շարունակութիւն, կ'ընդգրկէ թերթին 103րդ թիւէն (Թ. տարի թիւ 7, 1990 Յուլիս) մինչեւ 294րդ թիւը (ԻԵ. տարի թիւ 12, 2006 Գեկտ.) երկարող 124 խմբագրականներու հասկարալ մը:

Օրին, Ա. հատորը պարփակած էր թերթին առաջին 9 տարիներու 73 խմբագրականները:


Այս հատորին առաջին 4 խմբագրականները գրուած են Երուանդ Տէմիրճեանի կողմէ: Յաջորդող 15 խմբագրականները կը պատկանին Յ. Գեղարդի (Յարութիւն Գազանճեանի) գրիչին: Մնացեալ՝ 105 խմբագրականներու հեղինակն է Վիգէն Աւագեան:

Յայտնենք, որ 1990-1995 «Մարզիկ»ի զանազան թիւեր խմբագրականներու փոխարէն ունեցած են առաջնորդող յօդուածներ, որոնք նկատի չեն առնուած այս պարագային: Նմանապէս, հատորէն դուրս մնացած են կարգ մը խմբագրականներ, որոնք պարագայաբար անդրադարձած են մասնակի երեւոյթներու:

Հատորը լոյս կը տեսնէ մեկեանատեամբ Հ.Մ.Ը.Մ.ի խօսքին ու գործին հաւատացող Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ՝ ճորճ Տաբետեանի (Ամման), Մարգիս Տէր Պետրոսեանի (Միտնի) եւ Յովհաննէս Մարտոյեանի (Միտնի):

**«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**  
●Տէր եւ Տիկին Բաֆֆի Շէսմէսեան \$100





**ՅԱՐԳԱՆՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ**